***Դիլիջանի համայնքապետարան***

**Պայմանագիր** ***№ ՀՀ- ՏՄԴՀ-ԳՀԽԾՁԲ-22/24***

# *ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ*

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՂՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ՇԻՆՄԱՍՏԵՐ» ՍՊԸ
տնօրեն՝ Ռ. Բաղալյան

«Կայուն զարգացման ներդրումային
հիմնադրամ» հիմնադրամ Հ. Բաղալյան

***Երևան 2023***

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....4
1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 5
2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ .....7
2.1 Բնապահպանական գնահատման մեթոդաբանություն ազգային օրենսդրական դաշտ.....12
3.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....14
3.1. Ընդհանուր տեղեկատվություն.....14
3.2 Գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգ.....16
3.3 Ջրապահանջի հաշվարկման նախագծային չափանիշներ.....18
3.4 Նախագծով նախատեսվող աշխատանքներ .....22
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ).....25
4.1 Տեխնիկական և տեխնոլոգիականնլուծումներ.....27
4.2 Տեխնիկական միջոցներ.....29
4.3 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....30
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....32
5.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները .....32
5.2 Գործունեության տարածքի ինժեներաերկրաբանական պայմաններ.....33
5.3. Շրջանի կլիմայական պայմանները.....38
5.4. Մթնոլորտային օդի որակի բնութագիր.....41
5.5. Ջրային ռեսուրսներ ..... 41
5.5. Հողային ռեսուրսներ.....43
5.6. Անտառ.....45
5.7. Կենսաբազմազանություն.....47
5.7.1. Բուսական աշխարհ .....47
5.7.2. Կենդանական աշխարհ.....49
5.7.3 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ.....49
5.7.4 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ.....51
5.8. Տարածաշրջանի վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ.....52
5.9 Բնության հուշարձաններ.....53
5.10 Պատմամշակութային հուշարձաններ.....55
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ..... .....56
6.1 Բնապահպանական եվ սոցիալական ազդեցությունները.....56
6.2.Սոցիալական ազդեցությունները շինարարության փուլում.....58
6.3 Մեղմացման և փոխհատուցման միջոցառումներ.....59

6.3.1 Բնապահպանական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում……60
6.4 Թափոնների կառավարում……62
6.5.Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում……64
6.6 Դրական սոցիալական ազդեցություն……66
6.7. Աշխատանքի անվտանգություն և առողջություն……67
6.8. Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմացումը շահագործման փուլում..68
7. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ……70
8.ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ……70
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……72

**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

Հավելված 1. Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան. մեղմացնող միջոցառումներ

Հավելված 2 Մշտադիտարկման պլան

Հավելված 3 Նախագծման թույլտվություն

Հավելված 4  Ծրագրի շրջանակներում Թեղուտ գյուղին վերաբերող տվյալներ

Հավելնած 5 Դիլիջան ազգային պարկի ՊՈԱԿ-ի տնօրենի գրությունը

Հավելված 6 1-ին հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ, թերթի հայտարարություն

Հանայնքի ղեկավարի նախնական համաձայնություն

Հավելված 7  Պետական ռեգիստրի վկայական

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| Ծրագիր | ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում |
| Ծրագրի նպատակը | Համայնքի զարգացման ծրագիր, նպատակը՝ ջրօգտագործման համակարգի բարելավում, ջրային ռեսուրսի կայուն և արդյունավետ օգտագործում |
| Ծրագրի պատվիրատու | Դիլիջանի համայնքապետարան |
| Ձեռնարկող | «Կայուն զարգացման ներդրումային հիմնադրամ» հիմնադրամ /ՀՄԴ/ |
| Նախագծային կազմակերպություն | «ՇԻՆՄԱՍՏԵՐ» ՍՊԸ |
| Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս | Հեռ. + 099126626<br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 5/1, 0025<br>Տնօրեն՝ Հայկ Բադալյան |
| Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը | Հասցե՝ Տավուշի մարզ, համայնք՝ Դիլիջան, Թեղուտ գյուղի վարչական տարածք, Դիլիջան ԱՊ-ի տարածք, |
| Նախատեսվող աշխատանքներ | Արտաքին /մոտ 6 կմ/ և ներքին /2 կմ/ ցանցերի կառուցում |

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կայուն զարգացման ներդրումային հիմնադրամ» հիմնադրամը /ՀՄԴ/ մտադիր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցման աշխատանքների իրականացման համար ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն: «Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում» Նախագծի մշակումը կատարվել է «ՇԻՆՄԱՍՏԵՐ» ՍՊԸ –ի և Դիլիջանի համայնքապետարանի միջև կնքված՝ N ՀՀ- ՏՄԴՀ-ԳՀԽԾՁԲ-22/24 ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրի հիման վրա:

Ներկայացվող գործունեության նպատակն է՝ իրականացնել Թեղուտ բնակավայրի ջրամատակարարման պայմանների բարելավում՝ ապահովելով ջրի կայուն և արդյունավետ օգտագործումը: Ծրագրի իրականացման տարածքը գտնվում է Տավուշի մարզ, Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական տարածքում և մասամբ «Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի տարածքում /մասնակիորեն արտաքին ցանցը/: Նախագիծը համաձայնեցվել է Դիլիջանի համայնքապետարանի և «Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի հետ: Համաձայն «Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի 2022 թվականի նոյեմբերի 9-ի N 20-720 գրության՝ Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և գործունեության իրականացման /ջրագծերի վերանորոգում/կառուցում/ վերաբերյալ ՊՈԱԿ-ը առարկություն չունի: Գրությունը ներկայացված է Հայտի հավելվածներում: Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցման աշխատանքների նախագծման համար հիմք է հանդիսացել Դիլիջան համայնքի ղեկավարի կողմից 2022 թվականի նոյեմբերի 30-ին տրված N ԱՀ-12 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/: Շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական եզրակացությունը ստանալուց հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով շրջակա միջավայրի նախարարության կողմից ձեռք կբերվի ջրօգտագործման թույլտվություն:

Գործունեության իրականացման համար օգտագործվելու են համայնքային նշանակության հողերը, գոյություն ունեցող ասֆալտապատ և գրունտային ճանապարհները: Կառուցվող խողովակաշարերն անցկացվելու են գոյություն ունեցող ճանապարհի հարևանությամբ՝ նախկին խողովակաշարերի ծրագծով: Շինարարական աշխատանքների իրականացմանը խոչընդոտով ծառաթփային բուսականությունը բացակայում է: Կառուցապատվող հողամասի հարևանությամբ համայնքային, պետական և մասնավոր սեփականության հողեր են:

Ծրագրով նախատեսված՝ Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցման աշխատանքները ներառում են.

- արտաքին ցանցի կառուցում /6 կմ երկարությամբ/,
- ներքին ցանցի կառուցում /2 կմ երկարությամբ/,
- գլխամասային ջրընդունիչի կառուցում,
- կապտաժի կառուցում՝ մեկ հատ,

- ջրամբարի ցանկապատում,
- ջրաչափական դիտահորի կառուցում:

Աղբյուրը, որից սնվում է գյուղը, գտնվում է Թեղուտ գյուղից հյուսիս արևմուտք՝ մոտ 6.5կմ հեռավորության վրա, Դիլիջան ազգային պարկի ներկայիս Թաքնված Ջրվեժ անվամբ տարածքի մոտակայքում: Այն կառուցվել է 1980-ական թվականներին, ընդհանուր գտնվում է լավ վիճակում, ակնհայտ ջրակուրուստներ և վնասված հատվածներ չկան: Աղբյուրի հզորությունը հասնում է մինչև 40լ/վրկ:

Ջրամատակարարման համակարգը կառավարվում է համայնքի կողմից, ջրաչափություն չի կատարվում: Հիմնվելով տեխնիկական առաջադրանքի, իրականացված ուսումնասիրությունների և հաշվարկների վրա, ինչպես նաև Թեղուտ գյուղի գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգի արդյունքների վրա, նախագծով նախատեսվումն է իրականացնել հետևյալ միջոցառումները:

Բաժանարար տարայի տարածքում նախատեսվում է սանիտարական պահպանության գոտու կառուցում և բաժանարար տարրայի ջերմամեկուսացում: Բաժանարար տարրայից նախատեսվում է նոր ջրատարի կառուցում՝ մինչև գյուղի տարածք D325x5.0 L=33մ, D273x5.0 L=5057մ պողպատե և OD160 PN10 L=1980մ պոլիէթիլենե խողովակներով: Հաղարծին եկեղեցական համալիրի համար նախատեսվում է OD63 PN10 L=6մ պոլիէթիլենե խողովակ, որը կմիանա նոր նախատեսվող ջրատարին: Միացման հանգույցում նախատեսվում է նոր ե/բ կլոր D1000 ջրամատակարարման հոր, որտեղ կտեղադրվի եկեղեցական համալիրը սպասարկող ջրագծի կարգավորիչ փականը: Գյուղը չունի օրվա կարգավորման ջրամբար /ՕԿՋ/ և ջրաղբյուրից ջուրը ջրատարներով տրվում է միանգամից բաշխիչ ցանց, առանց վարակազերծման: Գյուղը կարիք ունի 500մ$^3$ տարողությամբ օրվա կարգավորման ջրամբարի և քլորակայանի կառուցման, որը ֆինանսների սղության պատճառով այս ծրագրով չի նախատեսվում: Առաջին իսկ հնարավորության դեպքում հարկ է լուծել այս խնդիրները: Գյուղի խմելու-տնտեսական կարիքների համար անհրաժեշտ է 6.89լ/վրկ ջուր, սակայն քանի որ գյուղը չունի առանձին ոռոգման համակարգ, նախատեսվում է աղբյուրի ամբողջ ջուրը հասցնել գյուղ 55հա ցանքատարածությունների և 2հա այգիների ոռոգման համար:

Ծրագրի իրականացումը խթան կհանդիսանա համայնքի կենսամակարդակի բարելավման և գյուղատնտեսական արտադրության զարգացման համար:

Նախագծի իրականացման համար հիմք են հանդիսացել.

- ✓ պայմանագիր N ՀՀ- ՏՄԴՀ-ԳՀԽԾՁԲ-22/24
- ✓ համայնքապետարանի կողմից ներկայացված տեղեկանքը՝ ջրասպառողների մասին,
- ✓ համայնքապետարանի կողմից ներկայացված տեղեկանքը՝ աղբավայրի և փափուկ գրունտի հեռավորությունների մասին,
- ✓ գեոդեզիական հանույթը՝ իրականացված նախագծային կազմակերպության կողմից,
- ✓ ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները՝ իրականացված նախագծային կազմակերպության կողմից,

- ✓ տարածքի կլիմայական բնութագիրը,
- ✓ Թեղուտ գյուղը սպասարկող մասնագետների հետ համատեղ կատարած ուսումնասիրություններն և վերջիններիս հետ հետագա վերլուծությունը:

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և գործունեության իրականացման համար ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան մշակվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության ուսումնասիրության և նախնական գնահատման սույն փաստաթուղթը: Փաստաթուղթը մշակվել է որպես սույն գործունեության բնապահպանական գնահատման ուղեցույց: Այս փաստաթուղթը ներառում է ծրագրի բնապահպանական գնահատման հիմնական սկզբունքները և չափանիշները և ԲԿՊ իրականացման ընթացակարգերը՝ գործունեության իրականացման բոլոր փուլերում:

## 2 ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Թեղուտ գյուղի ջրագծի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում:

Բնապահպանական և քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

***ՀՀ Սահմանադրություն* (ընդունված 06.12.2015թ.)** – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

***«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ*** օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող

գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

***«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք*** (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

***«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)*** - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

**«ՀՀ ջրային օրենսգիրք»**

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011 թ. N 75 - Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմեր”-ով:

***«ՀՀ բուսական աշխարհի մասին օրենք»***

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

**«ՀՀ կենդանական աշխարհի մասին օրենք»**

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000 թ.):

***«ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք»***

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է “Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին” ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006 թ.):

***«Հողերի օգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը*** (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

***«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)*** - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

***«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք*** (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

***«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք*** (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղեկատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգը, Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման "Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում" N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին"

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման "Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին":

ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոններ և նորմերի պահանջներ:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ կառավարության որոշումների ցանկը ներկայացված է ստորև.

- «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում,
- «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108–Ն որոշում,
- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967- Ն որոշում,
- 22. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում:

• «Դիլիջան ազգային պարկի 2017-2026թթ. Կառավարման պլանը և կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 190-Ն որոշումը, 23/02/2017թ.

Սույն որոշմամբ սահմանվում է «Դիլիջան» ԱՊ հարակից համայնքների սոցիալ-տնտեսական բնութագրին և շահագրգիռ կողմերի հետ պարկի մասնակցային կառավարման հնարավորությունները, գնահատվել է ԱՊ և դրա պահպանման գոտու տարածքում տնտեսական գործունեության, բնական պաշարների օգտագործմանբնագավառում շահագրգիռ կողմերի միջև փոխհարաբերությունների բնույթը, բացահայտվել են պարկին հարակից համայնքների «Դիլիջան ազգային պարկի 2017-2026թթ. Կառավարման պլանը և կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 190-Ն որոշումը, 23/02/2017թ.

Սույն որոշմամբ սահմանվում է «Դիլիջան» ԱՊ հարակից համայնքների սոցիալ-տնտեսական բնութագրին և շահագրգիռ կողմերի հետ պարկի մասնակցային կառավարման հնարավորությունները, գնահատվել է ԱՊ և դրա պահպանման գոտու տարածքում տնտեսական գործունեության, բնական պաշարների օգտագործմանբնագավառում շահագրգիռ կողմերի միջև փոխհարաբերությունների բնույթը, բացահայտվել են պարկին հարակից համայնքների




Նկար 1. Դիլիջան ազգային պարկի տեղադրությունը

Բնակչության կողմից կենսաբանական ռեսուրսների օգտագործման հասանելիությունը: «Դիլիջան» ԱՊ կառավարման պլանը նպատակ ունի ապահովել բնապահպանական և տնտեսական ոլորտների ինտեգրացման ուղղությամբ նախատեսված գործողությունների իրականացումը:

ՀՀ կառավարության 11/05/2002թ. «Դիլիջան ազգային պարկի և Դիլիջան պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 920-Ն որոշման համաձայն, ռեկրեացիոն գոտու վարձակալած տարածքներում աղաքաշինական գործունեությունը թույլատրվում էիրականացնել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բնապահպանական և քաղաքաշինական փորձաքննության դրական եզրակացության դեպքում:

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին" թիվ 1929-Ն որոշում, որում ներկայացված է ՀՀ Տավուշի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

### 2.1 Բնապահպանական գնահատման մեթոդաբանություն ազգային օրենսդրական դաշտ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցումը՝ որպես նախատեսվող գործունեություն, դասակարգվում է «Բ» կատեգորիայի, քանի որ Ծրագրի տարածքներն առնչվում են «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքների հետ: Սույն օրենքը պարունակում է հանրային քննարկումներ կազմակերպելու ընդհանուր դրույթներ, իսկ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014թ նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշումը կարգավորում է հանրային լսումների/ քննարկումների կազմակերպման ընթացակարգը և թիվը, ինչպես նաև սահմանում գործընթացի մեջ ներգրավված կազմակերպությունների/ մասնակիցների դերերը և պատասխանատվությունները: «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների փորձաքննությունը իրականացվում է չորս փուլով՝ պահանջվում է իրականացնել առնվազն 4 հանրային լսում, որոնք անց է կացնում նախաձեռնողը (մեծ մասամբ, նախաձեռնողը նախագծային խորհրդատուն է), փորձաքննություն անցկացնող լիազոր մարմինը կամ տեղական իշխանությունները:

Նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական հայտը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն: Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցութունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հայտում: Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման սույն հայտը ներառում է՝

- ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը.
- նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը.
- նախատեսվող գործունեության ենթակա տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրության սխեման.
- նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).
- շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.
- տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

- օդային ավազանի աղտոտում՝ ջրագծի կառուցման, վերակառուցման աշխատանքների և համապատասխան տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,
- նախատեսվող գործունեության ընթացքում մերձակա բնակչությանը /Թեղուտ գյուղ/ պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,
- հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում՝ ջրագծի կառուցման աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում,
- հողերի աղտոտում՝ գործունեության ընթացքում առաջացող շինարարական և կենցաղային աղբով,
- աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման ընթացքում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախնական գնահատման հայտի մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- տեխնիկական բնութագիրը,
- առկա փաստաթղթերի, նախագծերի ուսումնասիրումը,
- բնապահպանական, սոցիալական քաղաքականության շրջանակներում ելակետային տվյալների հավաքագրումը,
- Թեղուտ գյուղի ջրագծի կառուցման վերաբերյալ շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:
- Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքային նախագծի հիման վրա մշակվել է նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ անցկացվել են հանրային քննարկումներ,
- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ, տեսաձայնագրություն) ներկայացում բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և նախագծման քննարկումներ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման՝ փորձաքննության փուլերում:

## 3.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### 3.1. Ընդհանուր տեղեկատվություն

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված՝ նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Կայուն զարգացման ներդրումային հիմնադրամ» իմնադրամը /ՀՄԴ/: Հիմնադրամի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 5/1, 0025:

Նախատեսվող գործունեությունն է՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցումը: Ծրագրի նպատակն է ապահովել սակավ ոռոգման ջրի կայուն և արդյունավետ օգտագործումը՝ խթանելով գյուղատնտեսական արտադրության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև նվազեցնելով թիրախային խմբի խոցելիությունը կլիմայական փոփոխությունների ազդեցության հանդեպ: Ծրագրի իրականացումը զգալի դրական ազդեցություն կունենա տարածաշրջանի ջրային ռեսուրսների կայուն և բնապահպանական տեսանկյունից կառավարման արդյունավետության վրա, կխթանի գյուղական շրջանների զարգացումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը:

Համաձայն ջրամատակարարման համակարգի արդիականացման ծրագրի նախատեսվում է ջրամատակարարման համակարգի բարելավում: Այդ նպատակի համար նախատեսվում է նոր ջրատարի կառուցում՝ մինչև գյուղի տարածք D325x5.0 L=33մ, D273x5.0 L=5057մ պողպատե և OD160 PN10 L=1980մ պոլիէթիլենե խողովակներով: Հաղարծին վանական համալիրի համար նախատեսվում է OD63 PN10 L=6մ պոլիէթիլենե խողովակ, որը կմիանա նոր նախատեսվող ջրատարին: Միացման հանգույցում նախատեսվում է նոր ե/բ կլոր D1000 ջրամատակարարման հոր, որտեղ կտեղադրվի վանական համալիրը սպասարկող ջրագծի կարգավորիչ փականը: Գյուղի խմելու-տնտեսական կարիքների համար անհրաժեշտ է 6.89լ/վրկ ջուր, սակայն քանի որ գյուղը չունի առանձին ոռոգման համակարգ, նախատեսվում է աղբյուրի ամբողջ ջուրը հասցնել

գյուղ 55 հա ցանքատարածությունների և 2 հա այգիների ոռոգման համար:

Վերոնշյալ աշխատանքների նպատակը Աղավնավանք համայնքում վերը նշված ջրամատակարարման համակարգի կառուցվածքների արդիականացումն ու ՀՀ-ում գործող նորմերի պահանջներին համապատասխան խմելու ջրամատակարարման ապահովումն է:

Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցման հողային աշխատանքները ներառում են՝

- Ասֆալտբետոնե ծածկույթի կտրում, բարձած ասֆալտբետոնի տեղափոխում համապատասխան թափոնակույտ,
- Խրամուղու մշակում IV և V կարգի գրունտներում,
- Բարձած գրունտի տեղափոխում 7.0 կմ թափոնակույտ ,
- Խրամուղու մշակում IV և V կարգի գրունտներում, կողալիցքով,
- Խրամուղու լրամշակում ձեռքով, հատակի հարթեցմամբ,
- Ավազի նախապատրաստական շերտի իրականացում՝ h=10սմ հաստությամբ ,
- Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում,
- Խրամուղու ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից:

Խողովակաշարերի անցկացման տեխնոլոգիական աշխատանքները ներառում են.

- Պոլիէթիլենե (HDPE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում փորձարկումով DN50, PN=1,0 ՄՊա,
- Պոլիէթիլենե (HDPE) խողովակների ձևավոր պոլիէթիլենեխցափակիչ մասեր և սեպավոր փականների մոնտաժում,
- Պոլիէթիլենե (HDPE) խողովակների լվացում, ախտահանում,
- Պողպատե էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով,
- Պողպատե խողովակների մակերեսների երկշերտ ներկում՝ հակակոռոզիոն ներկով,
- Պողպատե (St) խողովակների հակակոռոզիոն մեկուսացում,
- Պողպատե (St) DN80-50 խողովակների ձևավոր մասեր,
- խճի նախապատրաստական շերտի, մանրահատիկ և խոշորահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում:

Նախատեսվող ջրամատակարարման խողովակաշարն ամբողջությամբ ստորգետնյա տեղադրմամբ է: Հողային ռեսուրսներին և բուսական ծածկույթին լրացուցիչ վնաս չի հասցնում, քանի որ ջրագծի ծրագիծն անցնում է ճանապարհի երկայնքով՝ գոյություն ունեցող ջրանցքի ուղղեգծով, ուստի հողային ռեսուրսներին հասցվող վնասի փոխհատուցման միջոցառումների անհրաժեշտության կարիք չկա:

Նախատեսվող ջրամատակարարման խողովակաշարն ամբողջությամբ ստորգետնյա տեղադրմամբ է, և լրացուցիչ վնաս չի հասցնում հողային ռեսուրսներին, քանի որ ուղղեգիծն անցնում է ճանապարհի երկայնքով՝ գոյություն ունեցող ջրանցքի ուղղեգծով, ուստի փոխհատուցման միջոցառումների անհրաժեշտության կարիք չկա:

Շինհրապարակը ձևավորվելու է ճանապարհի երկարությամբ: «Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի տարածքում շինարարական աշխատանքներն իրականացվելու են հատուկ սկզբունքներով: Շին տեխնիկան շինանութը կմոտեցնի շինհրապարակին մոտ՝ բացառելով ծանր տեխնիկայի շարժը հողային և բուսական ծածկույթի վրա: Ապ-ի տարածքում որոշ աշխատանքներ, հատկապես որտեղ կիրճ կա, իրականացվելու են ձեռքով:

Կատարվել է համապատասխան սոցիալական ուսումնասիրություն, որի համար հիմք են հանդիսացել սոցիալական ազդեցության գնահատումը կանոնակարգող

փաստաթղթային ուսումնասիրությունները, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական ելակետային տվյալների հավաքագրումը, համայնքների ղեկավարների կողմից ներկայացված ջրասպառման վերաբերյալ գրությունները և գործունեության իրականացման վերաբերյալ հանրային քննարկումները:

Որպես Ծրագրի շահառու՝ Թեղուտ գյուղի սոցիալական, ժողովրդագրական, տնային տնտեսությունների, ջրօգտագործողների և ջրասպառման ցուցանիշների տվյալները, ինչպես նաև հողօգտագործման ոռոգվող և չոռոգվող հողատարածքների վերաբերյալ տվյալներն օգտագործվել են Ծրագրի իրականացման շրջանակներում: Այդ տվյալները ներկայացվել և տրամադրվել են Դիլիջանի համայնքապետարանի և Թեղուտ վարչական ղեկավարի կողմից՝ փաստացի տվյալների հիման վրա: Ներկա դրությամբ Թեղուտ բնակավայրի ջրասպառմանը վերաբերող տվյալները հետևյալն են՝

- ✓ տնտեսություններ՝ 330 հատ,
- ✓ բնակչության թիվը՝ 1585 մարդ,
- ✓ գյուղատնտեսական կենդանիներ, այդ թվում՝ խոշոր եղջերավոր 540 հատ, խոզեր՝ 561 հատ, ոչխարներ՝ 113 հատ, ձիեր՝ 38 հատ, թռչուններ՝ 1863 հատ, մեղվաընտանիքներ՝ 128 հատ, ավանակներ՝ 6 հատ,
- ✓ ցանկատարածություններ՝ 55 հեկտար:

Առաջարկվող Ծրագրի իրականացման արդյունքում ջրամատակարարման համակարգի շնորհիվ չոռոգվող հողատարածքների ոռոգման խնդիրը որոշակի չափով կլուծվի և դրական ազդեցություն կունենա ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը, գյուղատնտեսության զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Ծրագրով նախատեսվող գործունեությունը բնական միջավայրի փոփոխություն չի ենթադրում, քանի որ ջրագծերի կառուցման աշխատանքներն իրականացվելու են նախկինում կառուցապատված՝ ջրագծի անցկացման տարածքներով:

Նախնական նախագծային աշխատանքների փուլում 2022թ. կատարվել են նախագծային նյութերի ուսումնասիրություններ և դաշտային աշխատանքներ՝ այցեր, հարցումներ, ելակետային տվյալների հավաքագրման համար, 2023 թվականի ապրիլին անցկացվել են հանրային քննարկումներ՝ կարծիքների հավաքագրման համար:

Սույն աշխատանքների և Ծրագրի իրականացման պատվիրատու է հանդիսանում Դիլիջանի համայնքապետարանը:

### 3.2 Գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգ

Աղբյուրը, որից սնվում է գյուղը, գտնվում է Թեղուտ գյուղից հյուսիս արևմուտք մոտ 6.5կմ հեռավորության վրա, Դիլիջան ազգային պարկի ներկայիս Թաքնված Ջրվեժ անվամբ տարածքի մոտակայքում: Այն կառուցվել է 1980-ական թվականներին, ընդհանուր գտնվում է լավ վիճակում, ակնհայտ ջրակուրուստներ և վնասված հատվածներ չկան: Աղբյուրի հզորությունը հասնում է մինչև 40լ/վրկ:

Աղբյուրից դուրս են գալիս երկու պողպատե խողովակներ DN300, DN200 տրամաչափի և մոտ 10մ հետո միանում DN800, L=1,5մ բաժանարար տարրային:

Բաժանարարից դուրս են գալիս երկու ջրատարներ՝

- 1-ինը OD160 պոլիէթիլենե խողովակ DN150 փականով, որը մոտ 360մ հեռավորության վրա անցնում է OD63 պոլիէթիլենե խողովակի և ձգվում դեպի Հաղարծին վանական համալիր: Ներկայումս OD160-ից OD63 միացման հատվածը վթարված է:
- 2-րդը DN200 պողպատե խողովակ DN200 փականով, որը մոտ 150մ հեռավորության վրա դառնում է DN150 և DN100 պողպատե խողովակներ և ձգվում մինչև գյուղի տարածք:

Ջրատարները նույնպես կառուցված են 1980-ական թվականներին և գտնվում են վթարային վիճակում, անցկացված են անտառի միջով առանց օդհեռ և թողարկ հորերի, հաճախակի են լինում վթարներ և ջրի կորուստ:

Գյուղի բաշխիչ ցանցը կառուցվել է 1980-ական թվականներին թուջե և պողպատե խողովակներով, միացումներն իրականացվել են տարերայնորեն, հաճախակի են լինում վթարներ, ընդհանուր ցանցը գտնվում է անբավար վիճակում:

Համակարգը կառավարվում է համայնքի կողմից, ջրաչափություն չի կատարվում:

ՆԿԱՐ 2.1. ԳՅՈՒՂԸ և ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՋՐԱՏԱՆԵՐԸ

ՆԿԱՐ 2.2 ՋՐԱՏԱՐԻ ՎԹԱՐԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԸ

### 3.3 Ջրապահանջի հաշվարկման նախագծային չափանիշներ

Աղյուսակում ամփոփված են ջրապահանջի հաշվարկման նորմատիվային պահանջները և մեր կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ներկայացված առաջարկը, որը ևս գտնվում է ՇՆևԿ նախատեսվող նորմերի սահմաններում: Ջրապահանջը որոշելիս կիրառվել են հետևյալ չափանիշները.

**Աղյուսակ 0-1. Ջրապահանջի և սպառման չափանիշները**

| Չափանիշներ | Մեկնաբանություն | Արժեք |
|---|---|---|
| Անհատ ջրօգտագործող | Ըստ ՇՆևԿ 2.04.02-84*-ի աղյուսակ 1-ի 2.1 կետի | 125 լ/օ/մ |
| Առանձնատների տների հողամասերի ջրման և պահպանման համար՝ մեկ բնակչի հաշվով | Ըստ ՇՆևԿ 2.04.02-84*-ի 2.3 կետի 3-րդ աղյուսակի 1-ի ծանոթության | 50 լ/օ/մ |
| Կոմերցիոն/արտադրական սպառում | Ըստ ՇՆևԿ 2.04.02-84*-ի 1-ին աղյուսակ 4-րդ ծանոթության | 10 % |
| Ջրակորուստ / իրական կորուստ | Ջրակորուստների չափը ներդրումներից հետո, որը հաշվի ենք առնում հաշվարկի մեջ: | 5-30 % |
| Սպասարկման մարարդակ | Թեղուտ գյուղի տների միացումը բաշխիչ ցանցին | 100 % |
| Օրվա անհավասարաչափության գործակից ($K_{day,max}$) | Ըստ ՇՆևԿ 2.04.02-84*-ի 2.2 կետի՝ $K_{օր,առավ}$ = 1,1–1,3, ընդունում ենք K=1,3 | 1.2 |

| | | |
|---|---|---|
| Ժամային անհավասարաչափության գործակից ($K_{hour,max}$) | Ըստ ՇՆևԿ 2.04.02-84*-ի 2.2 կետի՝ $K_{ժամ,առավ}=\alpha_{առավ}$ x $\beta_{առավ}$, որտեղ $\alpha$-ն բնակչության կենսամակարդակը, ձեռնարկությունների աշխատանքային ռեժիմը և այլ տեղական պայմանները հաշվի առնող գործակից է և $\alpha$=1,2–1,4, ընդունում ենք $\alpha$ = 1.3<br>$\beta$-ն համաձայն 2-րդ աղյուսակի՝ բնակիչների թվից կախված ջրապահանջի բնույթը հաշվի առնող գործակից է, $\beta$ =1,733 | 2.25 |
| Հակահրդեհային պաշտպանության համար | Ըստ ՇՆևԿ 2.04.02-84*-ի 2-րդ գլխի 5-րդ աղյուսակի | 1x10 լ/վրկ |

Ջրապահանջի հաշվարկը, որը հանդիսանում է հետագա բոլոր լուծումների հիմքը, ներկայացված է ստորև: Նշենք որ ջրապահանջի հաշվարկն իրականացված է և ներկա բնակչության թվաքանակի համար և 25 տարվա հեռանկարային զարգացման համար:
Տավուշի մարզի գյուղական բնակավայրերում գրանցվել է բնակչության քանակի նվազեցում -0.31%-ով: Հեռանկարային զարգացման համար նվազման այս գործակիցը հաշվի չենք առնում և ընդունում ենք 0% աճի/նվազման գործակից:
Ջրապահանջի մեջ հաշվարկել ենք 30% ջրակորուստ, որը ինքնին բավարար ցուցանիշ է նման համակարգերի համար:

**Աղյուսակ 0-2. Ջրապահանջի հաշվարկային տվյալների ամփոփ աղյուսակ վերակառուցվող հատվածի համար:**

| Տվյալներ | Միավոր | Քանակը՝ 2022-ի տվյալներով | Քանակը՝ 25 տարվա հեռանկարով |
|---|---|---|---|
| **Ջրասպառողների քանակը** | | | |
| **Բնակչություն** | | | |
| Մշտական բնակչություն | բնակիչ | 1585 | 1585 |
| Ժամանակավոր բնակչություն՝ հիմնականի 0% | բնակիչ | 250 | 250 |
| Ընդամենը | բնակիչ | 1835 | 1835 |
| **Անասնագլխաքանակ** | | | |
| Խոշոր եղջրավոր | գլուխ | 540 | 540 |
| Ձիեր/Ավանակներ | գլուխ | 44 | 44 |
| Մանր եղջրավոր | գլուխ | 113 | 113 |
| Խոզեր | գլուխ | 561 | 561 |
| Թռչուն | թ | 1863 | 1863 |
| **Ջրապահանջի նորմեր** | | | |
| Բնակչության օրեկան ջրսպահանջը | լ | 125.0 | 125.0 |

| | | | |
|---|---|---|---|
| | /օր.մարդ | | |
| Արդյունաբերական/կոմերցիալ ջրօգտագործում (% բնակչության ջրասպառումից) | % | | |
| Անհատական տների տնամերձ հողամասերի ջրում և պահպանում | լ /օր.մարդ | 50 | 50 |
| Խոշոր եղջրավորների համար | լ/օր.գլուխ | 70 | 70 |
| Ձիերի համար | լ/օր.գլուխ | 70 | 70 |
| Մանր եղջրավորների համար | լ/օր.գլուխ | 7 | 7 |
| Խոզերի համար | լ/օր.գլուխ | 10.5 | 10.5 |
| Թռչունների համար | լ/օր.գլուխ | 0.5 | 0.5 |
| **Ջրապահանջ** | | | |
| **Բնակչության համար** | | | |
| Բնակչի կողմից միջին օրեկան ջրօգտագործումը | մ$^3$/օր | 229.4 | 229.4 |
| Արդյունաբերական/կոմերցիալ ջրօգտագործում | մ$^3$/օր | 11.5 | 11.5 |
| Անհատական տների տնամերձերի օրեկան ջրսպառում | մ$^3$/օր | 79.3 | 79.3 |
| Գումարային միջին ջրսպառումը բնակիչների կողմից | մ$^3$/օր | **320.1** | **320.1** |
| **Կենդանիների համար** | | | |
| Խոշոր եղջրավորների ջրապահանջ | մ$^3$/օր | 37.8 | 37.8 |
| Ձիերի ջրապահանաջ | մ$^3$/օր | 3.1 | 3.1 |
| Մանր եղջրավորների ջրապահանջ | մ$^3$/օր | 0.8 | 0.8 |
| Խոզերի ջրապահանջ | մ$^3$/օր | 5.9 | 5.9 |
| Թռչունների ջրապահանջ | մ$^3$/օր | 0.9 | 0.9 |
| Գումարային միջին ջրսպահանջը կենդանիների համար | մ$^3$/օր | **48.5** | **48.5** |
| **Ջրապահանջն ընդամենը** | **մ$^3$/օր** | **369** | **369** |
| **Ջրա որուստ** | | | |
| Ջրակորուստ՝ % միջին ջրապահանջից | % | 72 | 30 |
| Ջրակորուստ | մ$^3$/օր | 948 | 158 |
| **Ընդամենը ջրապահանջ՝ ներառյալ ջրակորուստը** | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Միջին օրական պահանջարկը $Q_{avg.\ Year}$ | **մ³/օր** | **1316** | **527** |
| Օրական անհավասարաչափության գործակից մարդկանց համար $K_{day,max}$ | - | 1,2 | 1,2 |
| Օրական անհավասարաչափության գործակից խոշոր եղջր.անասունների համար $K_{day,max}$ | - | 1,1 | 1,1 |
| Առավելագույն օրական ջրածախս $Q_{day\ ,max}$ | **մ³/օր** | **1385** | **595** |
| Առավելագույն օրականի միջին վայրկենական $Q^{day,max}$ avg | լ/վրկ | **16.03** | **6.88** |
| Սարքավորումներով հագեցվածությունը հաշվի առնող գործակից α | - | 1,3 | 1,3 |
| Բնակչության քանակը հաշվի առնող գործակից β | - | 1,733 | 1.733 |
| Ժամային անհավասարաչափության գործակից բնակչության համար $K_{hour,max}$ | - | 2,25 | 2,25 |
| Ժամային անհավասարաչափության գործակից կենդանիների համար $K_{hour,max}$ | - | 2,50 | 2,50 |
| Առավելագույն օրվա առավելագույն վայրկենական ջրապահանջ $Q_{hour,max}$ | **լ/վրկ** | **22.5** | **13.4** |

| Տվյալներ | միավոր | Քանակը | Քանակը |
|---|---|---|---|
| **Ջրապահանջ** | | | |
| Առավելագույն օրվա ջրապահանջը $Q_{day,max}$ | մ³/օր | 1385 | 595 |
| Առավելագույն ջրօգտագործման օրվա միջին ժամային ջրապահանջը $Q_{aver,hours}$ | մ³/ժամ | 57.7 | 24.8 |
| Առավելագույն ջրապահանջի օրվա առավելագույն ժամային ջրապահանջը $Q_{hour,max}$ | մ³/ժամ | 81.1 | 48.2 |
| **Կարգավորման ծավալ Wreg** | | | |
| Ջրընդունիչից ՕԿՋ մատակարարվող առավելագույն ջրաքանակը | լ/վրկ | 16.0 | 6.9 |
| Ջրընդունիչից ՕԿՋ մատակարարվող առավելագույն ջրաքանակը | մ³/ժամ | 57.7 | 24.8 |
| KH | - | 1.00 | 1.00 |
| Kir = factor for irregularity of water consumption = $K_{hour,max}$ = α•β | - | 2.25 | 2.25 |
| $W_{reg} = Q_{day,max} * (1-K_H+(Kir-1) * (K_H/K_{ir})^{Kir/(Kir-1)}$ | մ³ | **403** | **173** |
| **Հակահրդեհային ծավալ Wfp** | | | |
| Հրդեհի մարման ժամանակը | ժամ | 3 | 3 |
| Միաժամանակյա հրդեհների քանակը | հատ | 1 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| Հակահրդեհային ջրապահանջ | լ/վրկ | **10** | **10** |
| $W_{fp} = 3 * q + 3 * (Q_{hour,max} - Q_{aver,hours})$ | մ³ | **188** | **178** |
| **Վթարային ծավալ Wemerg** | | | |
| Վթարի վերացման ժամանակը (n) | ժամ | 8 | 8 |
| $W_{emerg} = n * 0.7 * Q_{aver,hours}$ | մ³ | **123** | **139** |
| **Օրվա կարգավորման ջրամբարի ընդհանուր ծավալը** | | | |
| $W_{DRR} = W_{reg} + 2W_{fp} + W_{em.}$ | **մ³** | **904.3** | **490.3** |
| **ՕԿՋ-ի առկա ծավալը** | մ³ | 0.0 | 0.0 |

Համաձայն ջրասպառողների մասին տեղեկանքի, Թեղուտ գյուղի վերակառուցվող հատվածի ջրապահանջը վերակառուցումից հետո կկազմի 6.89լ/վրկ:

### 3.4 Նախագծով նախատեսվող աշխատանքներ

Հիմնվելով տեխնիկական առաջադրանքի, արդեն ներկայացված ուսումնասիրությունների և հաշվարկների, ինչպես նաև Թեղուտ գյուղի գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգի գնահատման արդյունքների վրա՝ Ծրագրի շրջանակներում նախատեսվում են հետևյալ միջոցառումները:

Բաժանարար տարրայի տարածքում նախատեսվում է սանիտարական պաշտպանության գոտու կառուցում և բաժանարար տարրայի ջերմամեկուսացում: Նախատեսվում է բաժանարար տարրայից նոր ջրատարի կառուցում մինչև գյուղի տարածք D325x5.0 L=33մ, D273x5.0 L=5057մ պողպատե և OD160 PN10 L=1980մ պոլիէթիլենե խողովակներով: Հաղարծին վանական համալիրի համար նախատեսվում է OD63 PN10 L=6մ պոլիէթիլենե խողովակ, որը կմիանա նոր նախատեսվող ջրատարին: Միացման հանգույցում նախատեսվում է նոր ե/բ կլոր D1000 ջրամատակարարման հոր, որտեղ կտեղադրվի վանական համալիրը սպասարկող ջրագծի կարգավորիչ փականը: Համալիրը սպասարկող OD160 պոլիէթիլենե ջրագիծը չի շահագործվի:

Ջրատարի վրա նախատեսվում է թվով 6 հատ օդհեռ և 8 հատ թողարկ հորեր: Ջրատարի հուսալի և անխափան աշխատանքի համար նախատեսում է թվով 2 հատ մարիչ հորեր: Գյուղի գլխամասում, ջրատարի ՆԿ50+90 կետում, նախատեսվում է նոր ջրամատակարարման կարգավորիչ հոր, որտեղ ջրատարը բաժանվում է երեք ճյուղի՝ OD160, DN150, OD110: Ջրատարը գյուղի տարածքում միանում է առկա ջրամատակարարման հորին:

Գյուղի խմելու-տնտեսական կարիքների համար անհրաժեշտ է 6.89լ/վրկ ջուր, սակայն քանի որ գյուղը չունի առանձին ոռոգման համակարգ, նախատեսվում է աղբյուրի ամբողջ ջուրը հասցնել գյուղ 55հա ցանքատարածությունների և 2 հա այգիների ոռոգման համար:

Վերը նշված տեխնիկական լուծումների համար նոր հողատարածքներ չի պահանջվում, քանի որ նոր կառուցվող խողովակաշարերը անցկացվում են նախկին խողովակաշարերի ծրագծով՝ գոյություն ունեցող գրունտային ճանապարհի

հարևանությամբ: Գրունտային ճանապարհը նախատեսված է եղել խողովակաշարի սպասարկման համար:

Քանի որ գյուղը չունի օրվա կարգավորման ջրամբար (ՕԿՋ) և ջրաղբյուրից ջուրը ջրատարներով տրվում է միանգամից բաշխիչ ցանց առանց վարակազերծման: Գյուղը կարիք ունի 500մ$^3$ տարողությամբ օրվա կարգավորման ջրամբարի և քլորակայանի կառուցման, որը ֆինանսների սղության պատճառով այս ծրագրով չի նախատեսվում: Առաջին իսկ հնարավորության դեպքում հարկ է լուծել այս խնդիրները:




**ԹԵՂՈՒՏ ԳՅՈՒՂԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ:**

## 4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

Գործունեությունը նախատեսվում է իրականացնել Դիլիջանի համայնքային հողերի տարածքում: Արտաքին ցանցը մասամբ գտնվում է Դիլիջան ԱՊ-ի տարածքում:

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքների իրականացման համար շին. նյութերի ընդունման հարթակների պատրաստում
- աշխատանքների իրականացման հրապարակի գիշերային լուսավորվածություն
- նախատեսվող աշխատանքների արդյունքում առաջացած թափոնների տեղափոխում Դիլիջանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Հիմնական փուլում կատարվելու է Թեղուտ գյուղի ջրամատակարարման համակարգի կառուցում:

Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՇՆևԿ III-4-80* «Անվտանգության տեխնիկան շինարարության մեջ»: Աշխատանքի անվտանգության ապահովման համար կարևորվում է անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման միջոցառումները, այդ թվում՝

- Եթե շինարարության հրապարակում առկա են էլեկտրահաղորդիչ գծեր, ապա ամբարձիչը պետք է տեղակայվի 30մ–ից ոչ մոտիկ ծայրամասային էլ. հաղորդիչ լարից: Եթե անհրաժեշտություն կա աշխատել 30մ-ից պակաս հեռավորության վրա, պետք է ձևակերպել կարգագիր-թույլատվություն, որտեղ նշվում են այդ աշխատանքի անվնաս պայմանները:
- Ամբարձիչի մեքենավարը կարող է դադարեցնել աշխատանքը, եթե կհայտնաբերվեն ամբարձիչի կոնստրուկցիայի ճաքեր և դեֆորմացիաներ, ճոպանի կտրվածք, արգելակման խախտումներ և այլն:
- Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան 50:
- Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման–բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին:

«Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի տարածքում շինարարական աշխատանքներն իրականացվելու են հատուկ սկզբունքներով: Շին տեխնիկան շինանութը կմոտեցնի շինհրապարակին մոտ՝ բացառելով ծանր տեխնիկայի շարժը հողային և բուսական ծածկույթի վրա: Ապ-ի տարածքում որոշ աշխատանքներ, հատկապես որտեղ կիրճ կա, իրականացվելու են

ձեռքով:


Համաձայնեցումների հատակագիծ
Մ1:5000
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ է
Ջրընդունիչի տպահաք Ջրատարի սկիզբ ՆԿ0+00
Ցանկապատ
D325x5, L=11.0մ
Ջերմամեկուսացում պենոպլաստե 36մմ հաստությամբ DN250մմ կիսախողովակներով, փաթաթելով ֆոլգաֆոլով և չժանգոտվող մետաղե ցանցով N50,Φ2.5
Մետաղական հենարաններ
Ջ ՆԿ3+65
ՋՀ-1 ՆԿ0+01
OD63, PN10, L=6.0մ
Ղեսի եկեղեցի
Խոդովակի անցկացում կամուրջի կողքով
Ջերմամեկուսացում պենոպլաստե 36մմ հաստությամբ DN250մմ կիսախողովակներով, փաթաթելով ֆոլգաֆոլով և չժանգոտվող մետաղե ցանցով N50,Φ2.5
ՕՀ-3 ՆԿ13+40
ԹՀ-2 ՆԿ13+00
D273x5, L=2588.0մ
Հարկերին վանական հանգիր
ԹՀ-4 ՆԿ17+80
ՕՀ-5 ՆԿ18+80
ԹՀ-6 ՆԿ20+20
ՕՀ-7 ՆԿ20+40
ԹՀ-8 ՆԿ24+60
ՋՀ-9 ՆԿ26+00
Մարիչ հոր N1, ՆԿ25+99
D325x5, L=11.0մ
D273x5, L=1190.0մ
D273x5, L=919.0մ
Մարիչ հոր N2, ՆԿ47+19
ՋՀ-10 ՆԿ47+20
D325x5, L=11.0մ
D273x5, L=360.0մ
ՋՀ-11 ՆԿ50+90
Մագիստրալ գազատար DN1000
Գազատար DN700
OD160, PN10, L=1980.0մ
Թեղուտ բնակավայր
ՕՀ-15 ՆԿ61+00
ԹՀ-16 ՆԿ64+00
ԹՀ-18 ՆԿ69+40
Ջրատարի վերջ ՆԿ70+70
DN150 OD110
ՕՀ-13 ՆԿ56+80
ԹՀ-14 ՆԿ59+80
ՕՀ-17 ՆԿ66+80
ԹՀ-12 ՆԿ55+40
Գազատար DN700
Պայմանական նշաններ
Նախագծվող ջրատար
Գոյություն ունեցող ջրագծեր
Գոյություն ունեցող Գազատար
Նախագծվող Մարիչ հորեր
Նախագծվող Թողարկ և Օդհեռ հորեր
Նախագծվող ջրաճնշակարգավարման հորեր
Մետաղական հենարաններ
Գոյություն ունեցող ջրաճնշակարգավարման հոր
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ է
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ է
Պատվիրատու՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցում
Հանձնաժողովի նախագահ
Գլխավոր մասնագետ
Ա. Մուսայան
Ա. Մուսայան
ՀՀ ԳԼՀ
Նախագիծ
Համաձայնեցումների հատակագիծ Մ1:5000
Մ.Ս.
ԱԶ-3
37
SHIMASTER LLC

Համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից կդադարեցնեն աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

*Շինարարության տևողությունը*

Շինարարության տևողությունը որոշվել է 12 ամիս՝ նախնական:

Շինարարության նորմատիվ ժամկետում հաշվի են առնված՝

- նախապատրաստական շրջանի տևողությունը
- նախագծվող օբյեկտի շինարարությունը
- կոմպլեքսային փորձարկումներ, անհրաժեշտ գործարկման և կարգաբերման աշխատանքները:

**4.1 Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ**

*4.2.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր*

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ համապատասխան շինարարական մեքենաների ու մեխանիզմների կիրառմամբ:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի ջրամատակարարման համակարգերի տարածքներ նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհներով, իսկ շինարարության նյութատեխնիկական մատակարարումն իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար նախատեսվում է տրվում օգտագործել հարակից տարածքների շինարարական արդյունաբերության հզորությունները:
- առանձին մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:

Հողային աշխատանքների հաշվարկն իրականացվել է համաձայն երկրաբանական կտրվածքների: Նախատեսվող գործունեության ժամանակ առաջացող թափոնները հիմնականում 4-րդ և 5-րդ դասի են (համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի): Դրանք իրենցից ներկայացնում են շինարարության խառը թափոններ (3990130001005), ոչ պիտանի հանույթը և հողային աշխատանքների դեպքում հողային,

ավազային շլամը (3160250004004), փորման աշխատանքներ ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5), որը 5-րդ դասի թափոն է, ինչպես նաև շինարարական աշխատանքներում ներգրավված անձնակազմի կողմից առաջացրած կենցաղային աղբը (ծածկագիրը՝ 91200400 01 00 4): Շինարարական աշխատանքների ժամանակ բոլոր ապամոնտաժված խողովակագծերը վերադարձվելու են կոմունիկացիաների սեփականատերերին: Վերջիններիս ընդհանուր քանակները շինարարության ողջ ընթացքի համար կներկայացվեն ՇՄԱԳ-ում:

Հողային աշխատանքների ծավալներն ու առաջացած թափոնների քանակը

| Ջրամատակարարման համակարգի անվանումը | Խրամ. քանդման ընդհ. մակերեսը, մ$^2$ | Հանույթ, մ$^3$ | Ետլիցք մ$^3$ | Ավելցուկային գրունտ, մ$^3$ | Բուսահող, մ$^3$ | Կենցաղային աղբի կանխատեսվող տարեկան քանակ, կգ |
|---|---|---|---|---|---|---|
| Թեղուտի ջրագիծ /արտաքին և ներքին ցանցեր/ | 5200 | 4700 | 3800 | 900 | - | 290 |

Սույն ծրագրի շրջանակներում հողի բերրի շերտի հանում և ժամանակավոր պահեստավորում չի նախատեսվում, քանի որ վերջինս բացակայում է ծրագրի իրականացման տարածքում (շինարարական աշխատանքներն իրականացվելու են արդեն իսկ կառուցապատված հատվածներում): Քանդման/փորման աշխատանքները ներառում են գոյություն ունեցող ասֆալտաբետոնյա ծածկույթի քանդում՝ 113 խմ ծավալով /հիմնականում ջրատարի հատվածում/: Շինարարական աշխատանքների ընթացքում հեռացվող ասֆալտբետոնյա ծածկույթը, վերադարձվելու է ճանապարհաշինարարական ընկերությանը՝ հետագա վերամշակման և համայնքի այլ տարածքներում վերօգտագործման նպատակով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական աղբը և քանդված հանված հողային զանգվածի որոշ մաս՝ 900 խմ, որը չի օգտագործվելու հետլիցքի նպատակով կտեղափոխվի Դիլիջանի համայնքապետարանի կողմից հատկացված գյուղից 7 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր, իսկ կենցաղային աղբի տեղափոխման համար կկնքվի պայմանագիր աղբահեռացումն ապահովող համապատասխան կազմակերպության հետ:

Շինարարական աղբի փաստացի քանակի որոշումը և ծավալաթերթով նախատեսված վճարումը հնարավոր է իրականացնել միայն տեղամասի տեխնիկական հսկողություն իրականացնող ինժեների և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության համաձայնության դեպքում:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Շինարարության և շահագործման փուլում առաջացած կենցաղային աղբը աղբահավաք ծառայության կողմից կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շինարարության ընթացքում օժանդակ գործընթացներից առաջացող թափոնների /ինչպես օրնակ՝ բանեցված շարժիչների յուղեր, բանեցված դողածածկաններ, Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան և այլն/ վերաբերյալ տեղեկատվությունը, բնութագրերը և կառավարման միջոցառումները կներկայացվեն ՇՄԱԳ-ում:

Շինարարության նորմատիվ տևողությունը, որը այս ծրագրում ընդգրկված ոռոգման բոլոր համակարգերի համար կազմում է ընդհանուր 12 ամիս, որոշվել է հաշվի առնելով օբյեկտների նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագրերն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Այս ժամանակահավածը ներառում է նաև վեգետացիոն ժամանակահատվածը և շինարարության հնարավոր ընդհատումները՝ պայմանավորված ցուրտ եղանակային պայմաններով:

Շինարարական աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում կլինի տեղական համայնքներից ներգրավված համապատասխան որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Ջրամատակարարման համակարգերում շինարարության ընդհանուր ղեկավարությունը կիրականացվի տեղամասի պետերի և աշխղեկների կողմից:

### *4.2 Տեխնիկական միջոցներ*

Աշխատանքների կատարման համար նախատեսվում է օգտագործել հետևյալ մեքենաները և մեխանիզմները.

*Աղյուսակ 4.2.* Հիմնական մեքենաների և մեխանիզմների մոտավոր քանակություն

| Հ/Հ | Մեքենաների և մեխանիզմների անվանում | Մեքենաների մակնիշը և տիպը | Քանակ, հատ |
|---|---|---|---|
| 1 | Ավտոինքնաթափ | բեռնատվ. 10տ | 3 |
| 2 | Ավտոբետոնախառնիչ | տարողությունը 2մ$^3$ | 1 |
| 3 | Ավտոամբարձիչ | բեռնատվ. 12տ | 1 |
| 4 | Բուլդոզեր +-+-v+''''''''''' | հզորությունը 59-96կՎտ | 1 |
| 5 | Կոմպրեսոր | արտադ-յունը 10մ$^3$/րոպե | 1 |
| 6 | Հետահար մուրճ | ՄՕ-10 | 2 |
| 7 | Ձեռքի պնեվմատոփիչ | 40կգ | 2 |
| 8 | Էքսկավատոր | նեղ շերեփ և 0.65մ$^3$ | 1 |
| 9 | Բնահողերի մեխանիկական փխրեցման մեխանիզմ | հիդրոմուրճ | 1 |
| 10 | Խորքային վիբրատոր | ԻՎ | 2 |
| 11 | Զոդման ապարատ պողպատի համար | - | 1 |
| 12 | Զոդման ապարատ պոլիէթիլենի համար | - | 1 |
| 13 | Գլդոն ինքնագնած | 6տ | 1 |

*Աղյուսակ 4.3. Ժամանակավոր շինարարական տնտեսության շենքերի և շինությունների ցուցակ*

| n/n | Անվանում | Քանակ | Չափեր, մ | Ծախսվող էներգ. կՎտ | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Աշխեկի գրասենյակ | 1 | 8.6 x 3.1 | 6 | կոնտեյներային |
| 2 | Գործիքների պահեստ | 2 | 6.7 x 3.0 | 6 | կոնտեյներային |
| 3 | Մեխանիկական արհեստանոց | 2 | 7.25 x 2.9 | 7.2 | կոնտեյներային |
| 4 | Հանդերձարան չորանոցով | 2 | 6.7 x 3.0 | 7.22 | շարժական |
| 5 | Մեկ տեղանոց զուգարան | 1 | D 1.3 | 1 | - |
| 6 | Բուժ. կետ | 1 | 10.0 x 2.4 | 7.7 | կոնտեյներային |
| 7 | Կիսաբաց պահեստ | 2 | 10.0 x 5.0 | | - |
| 8 | ՇԷԿ– 30 հարկ եղած դեպքում | 4 | 2.3 x0.89 | | АД-30С-РМ1 |
| 9 | ՇԷԿ – 60 հարկ եղած դեպքում | 2 | 2.7 x1.95 | | АД-50С-Р |

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակահատվածում օգտագործվելու են վերը թվարկված տեխնիկա-տրանսպորտային միջոցները որոնք կարող են լինել կապալառու կազմակերպության միջոցները կամ դրանց բացակայության դեպքում վարձակալվել այլ կազմակերպություններից: Մեքենաների կայանման վայրեր չեն նախատեսվում, քանի որ մեքենաներն աշխատելու են ըստ պահանջի և կայանվելու են գործունեության տարածներում, շինարարական հրապարակում՝ ճանապարհի եզրին: Այն տարածքներում, որտեղ հնարավոր չի լինի աշխատանքներն իրականացնել շինարարական տեխնիկայի միջամտությամբ՝ կկատարվի առանց դրանց (ձեռքի աշխատանքներ), հիմնականում՝ Դիլիջան ազգային պարկի տարածքում: Ազգայի պարկի տարածքում մեքենաները կայանելու են միայն ճանապարհի երկայնքով՝ բացառելով հողային ծածկույթի վնասումը:

### 4.3 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Նախատեսվող գործունեության իրականացման համար շինարարական աշխատանքների ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր: Ջրագծի ամանցկացման աշխատանքների իրականացման համար նախատեսվում է օգտագործել բետոնային խառնուրդ, ամրաններ, ջրամեկուսիչ նյութեր, բիտումա-պոլիմերային մաստիկ, եռակցման էլեկտրոդներ և այլն:

Որպես բնառեսուրս շինարարական աշխատանքների համար օգտագործվում է ջուր: Աշխատանքների իրականացման տարածքում բուսահողը բացակայում է, քանի որ ջրագծերի անցկացումը և մյուս շինարարական աշխատանքներն իրականացվելու են նախկինում արդեն իսկ կառուցապատված, ասֆալտապատ տարածքներում, նոր տարածքների օտարում ջրագծերի կառուցման համար չի նախատեսվում: Ծրագրի իրականացման ընթացքում հողային աշխատանքներից Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը օգտագործվելու է աշխատողների խմելու և կենցաղային կարիքների համար:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$W= (n \times N + n_1 \times N_1) T$

որտեղ՝ n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է - 9

N - ջրածախսի նորման՝ - 0.016մ$^3$,

$n_1$ - բանվորների թիվն է - 25,

$N_1$ - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025մ$^3$/մարդ օր,

T –աշխատանքային օրերի առավելագույն թիվը՝ 365 օր:

W= 25 մարդ x 0.025 լ/մարդ/օր x 17 ամիս x 22 օր/ամիս = 233.6 մ$^3$ կամ 0.625 մ$^3$/օր:

Խմելու ջուրը մատակարարվելու է 20 լ բալոններով:

*Ջրցանի համար* միջին օրական ջրապահանջը գնահատվում է 1.2 մ$^3$, տաք և առանց տեղումների օրերի թիվը՝ 190, ընդամենը ջրապահանջը կկազմի 228 մ$^3$:

Տեխնիկական ջուրը մատակարարվելու է մոտակա ոռոգման ցանցից, ջրատար մեքենաներով, համայնքի հետ կնքվելիք պայմանագրի հիման վրա:

***Շինարարության տևողությունը***

Շինարարության ընդհանուր ժամկետը, ներառյալ նախապատրաստական շրջանը կկազմի՝ 12 ամիս ներառյալ վեգետացիոն ժամանակահատվածը և հնարավոր, ձմեռային սուղ պայմաններից ելնելով՝ շինարարության ընդհատումները: Շինարարության ընթացքում կապալառուն վեգետացիոն հատվածը ընդունում է որպես տեխնիկական ընդմիջում:

*Աշխատուժի թվաքանակը*

Շինարարության աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ, ներառյալ էլեկտրազոդողներ և բետոնագործներ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի:

Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխեկի կողմից:

Աշխատուժի ընդհանուր քանակը – 25 հոգի ներառյալ օժանդակ կառույցների աշխատողները

## 5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### 5.1. Տարածքի աշխարհագրական դիրքը

Ծրագրի իրականացման տարածքը գտնվում է Տավուշի մարզ, Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական տարածքում և մասամբ «Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի տարածքում /մասնակիորեն արտաքին ցանցը/:

Դիլիջանը տեղակայված է Հայաստանի Հանրապետության հյուսիսային հատվածում՝ Տավուշի մարզի հարավ-արևմուտքում՝Տավուշի մարզկենտրոն Իջևան քաղաքից 35-40 կմ, մայրաքաղաք Երևանից 96 կմ, Վանաձորից 38 կմ, իսկ Սևանա լճից՝ 33 կմ հեռավորությունների վրա: Դիլիջան քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1100-1300 մետր բարձրության վրա՝ շրջապատված Փոքր Կովկասի լեռնազանգվածներով: Հյուսիս-արևելքում հարում է Բազումի, արևմտյան և հարավ-արևմտյան կողմերից՝ Փամբակի, արևելքից՝ Միափորի և հարավ-արևելքից՝ Արեգունի անտառաշատ լեռներին: Կիրճի լեռնային զանգվածները ծածկված են հարուստ անտառային տարածություններով, որոնք վերջանալով լեռնային կատարներին, փոխարինվում են ալպյան մարգագետիններով: Քաղաքը անմիջապես փռված է Աղստև գետի հովտում:

Դիլիջան քաղաքը հարակից Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Աղավնավանք և Խաչարձան գյուղերի հետ միասին ընդգրկված է Դիլիջան խոշորացված համայնքի կազմում:

Թեղուտ գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանում, մարզկենտրոն Իջևանից 28կմ հարավ-արևմուտք, Դիլիջան-Իջևան ճանապարհի վրա, Աղստև գետի ձախափնյակում: Գյուղի մակերեսը 9,5 կմ քառակուսի է: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550մ, գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +19°C, ձմռանը՝ -2°C:

Գյուղը հիմնադրվել է 1925 թվականին, սկզբում եղել է նախկին Ջարխեչ գյուղի թաղամասերից մեկը, հետագայում որպես առանձին գյուղ անվանվել է Հաղարծին, այնուհետև՝ Թեղուտ: Եղել է Դիլիջան քաղաքի վարչական ենթակայության տակ, առանձին բնակավայրի կարգավիճակ է ստացել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 1993 թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ: Ներկայումս հանդիսանում է Դիլիջան խոշորացված համայնքի գյուղերից մեկը:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և բանջարեղենի մշակությամբ:

Թեղուտից 5 կմ հյուսիս, “Ճեռի հողեր” հանդամասում, գտնվել են Հայոց թագավոր Արտաշես Ա-ի (189-160 մ.թ.ա.) թողած երկու սահմանաքարերը արամերեն գրով: Թեղուտից մի քանի կիլոմետր հեռավորության վրա են գտնվում Հաղարծին և Ջուխտակ վանքերը:

Ներկա դրությամբ Ծրագրին առնչվող Թեղուտ բնակավայրի ջրասպառմանը վերաբերող տվյալները հետևյալն են՝

- ✓ տնտեսություններ՝ 330 հատ,
- ✓ բնակչության թիվը՝ 1585 մարդ,

✓ գյուղատնտեսական կենդանիներ, այդ թվում՝ խոշոր եղջերավոր 540 հատ, խոզեր՝ 561 հատ, ոչխարներ՝ 113 հատ, ձիեր՝ 38 հատ, թռչուններ՝ 1863 հատ, մեղվաընտանիքներ՝ 128 հատ, ավանակներ՝ 6 հատ,

✓ ցանկատարածություններ՝ 55 հեկտար:

Դիլիջանի բնական լանդշաֆտները հիմնականում ներկայացված են անտառներով: Դիլիջան համայնքի վարչական սահմաններն ընդգրկված են «Դիլիջան» ազգային պարկի տարածքում, որը Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներից մեկն է: Կառուցապատվող տեղամասի մի մասը գտնվում է «Դիլիջան» ազգային պարկի տարածքում: Նախագիծը համաձայնեցվել է Դիլիջանի համայնքապետարանի և «Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի հետ: Համաձայն «Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի 2022 թվականի նոյեմբերի 9-ի N 20-720 գրության՝ Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և գործունեության իրականացման /ջրագծերի վերանորոգում/կառուցում/ վերաբերյալ ՊՈԱԿ-ը առարկություն չունի:

## 5.2 Գործունեության տարածքի ինժեներաերկրաբանական պայմաններ

2022 թվականի նոյեմբեր ամսին կատարվել են ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություններ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի ջրագծի կառուցման համար: Ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը առկա մերկացումների տվյալների, տեղազննության, ակնադիտարկման նշված և հարակից տարածքներին վերաբերվող մեր կողմից նախկինում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների համադրմամբ և վերլուծությամբ:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է մարզկենտրոն Իջևանից 28կմ հարավ-արևմուտք, Աղստև գետի ձախափնյակում: Ուսումնասիրվող ուղեգիծը անցնում է բլրավետ ռելիեֆով՝ ծովի մակարդակից բարձրությունը 1550մ է:

Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս հաշվի է առնվել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Դիլիջան քաղաքում, ուստի բերում ենք նրա համապատասխան կլիմայական ցուցանիշները: Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և տաք ամառը՝ և չափավոր ցուրտ անհողմային ձմեռը:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Դիլիջանի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

- Տարեկան միջին ջերմաստիճանը 8.3 °C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 38°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -23°C
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 74
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա 51
- Օդի հարաբերական խոնավությունը ամենաշոգ ամսվա 60
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 630-700մմ:

- Քամու միջին տարեկան արագությունը 1.8մ/վ :
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, կազմում է 47 սանտիմետր:




Նկ. 3 Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են վերին Յուրայի հասակի նստվաշքներ, որոնց արտաքին շերտը ծածկված է դելյուվիալ և պրոլյուվիալ ծագման նստվածքներով, որոնք ներկայացված են բեկորախճային գրունտներով:

**<u>Հիդրոերկրաբանական տեսակետից</u>** տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա: Ջրառատ են Աղստև գետի ողողահունի և Սպիտակաջուր, Հաղարծին գետերի արտաբերման կոների ալյուվիալ նստվածքները: **Հետազննվող տարածքում գրունտային ջրերը ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 5 մ-ից խորը հորիզոններում:**

**<u>Ֆիզիկաերկրաբանական</u>** վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն բացակայում են:

**Շրջանի սեյսմիկ և սեյսմատեկտոնական պայմանները**

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ, 8-9 բալլ սեյսմիկությամբ:

**Տարածքի երկրաբանական կառուցվածքը**

Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է ակնադիտական եղանակով, բնական մերկացումների և արխիվային նյութերի հիման վրա: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների չորս շերտ: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

**<u>Շերտ 1</u>**

Ասֆալտային շերտ

**<u>Շերտ 2</u>**

Բեկորախճային գրունտներ 20-25 ավազա-կավավազային լցանյութով: Գրունտների մշակման խումբը ըստ СНиП IV-5-82-ի (13) IV կարգ է:

Ծավալային կշիռը 1.8-1.9 գ/սմ$^3$

Ներքին շփման անկյունը 21-23$^0$

Թույլատրելի լարումը 1.5-2.0 կգ/սմ$^2$

Շինարարական մշակման խումբը՝13/14 - IV կարգ:

**<u>Շերտ 3</u>**

Վերին Յուրայի հասակի, խայտաբղետ գունավորմամբ, միջին ամրության, կավային ցեմենտով կապակցված ավազաքարեր, տուֆավազաքարեր:

Ծավալային կշիռը 2.25-2.35 գ/սմ$^3$

Ներքին շփման անկյունը 50-55$^0$

Թույլատրելի լարումը 4.0-4.5 կգ/սմ$^2$

Շինարարական մշակման խումբը՝28$^{a-}$ V կարգ:

**<u>Շերտ 4</u>**

Վերին Յուրայի հասակի, ամուր, կրային ցեմենտով կապակցված մոխրա-դարչնագույնից մինչև կապտա-կեղտոտկանաչավուն ավազաքարեր, տուֆավազաքարեր:

Ծավալային կշիռը 2.45-2.55 գ/սմ3

Ներքին շփման անկյունը 55-600

Թույլատրելի լարումը 5.0-6.0 կգ/սմ2

Շինարարական մշակման խումբը՝ համաձայն СНиП IV-5-82-ի 286 - VI կարգ:

ՆԿ 0+00 – ՆԿ 4+10

0.0-0.6մ Բեկորախճային գրունտներ 20-25 ավազա-կավավազային լցանյութով: Գրունտների մշակման խումբը ըստ СНиП IV-5-82-ի (13) IV կարգ է:

0.6-2.0մ Վերին Յուրայի հասակի, խայտաբղետ գունավորմամբ, միջին ամրության, կավային ցեմենտով կապակցված ավազաքարեր, տուֆոավազաքարեր: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի 28a- V կարգ է:

ՆԿ4+10 – ՆԿ10+00

0.0-0.8մ Բեկորախճային գրունտներ 20-25 ավազա-կավավազային լցանյութով: Գրունտների մշակման խումբը ըստ СНиП IV-5-82-ի (13) IV կարգ է:

0.8-2.0մ Վերին Յուրայի հասակի, խայտաբղետ գունավորմամբ, միջին ամրության, կավային ցեմենտով կապակցված ավազաքարեր, տուֆոավազաքարեր: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի 28a- V կարգ է:

2.0-2.7մ Վերին Յուրայի հասակի, ամուր, կրային ցեմենտով կապակցված մոխրա-դարչնագույնից մինչև կապտա-կեղտոտկանաչավուն ավազաքարեր, տուֆոավազաքարեր: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի 28 б - VI կարգ է:

ՆԿ10+00 – ՆԿ 15+70

0.0-6սմ Ասֆալտային շերտ

6սմ-0.70մ Բեկորախճային գրունտներ 20-25 ավազա-կավավազային լցանյութով: Գրունտների մշակման խումբը ըստ СНиП IV-5-82-ի (13) IV կարգ է:

0.7-1.6մ Վերին Յուրայի հասակի, խայտաբղետ գունավորմամբ, միջին ամրության, կավային ցեմենտով կապակցված ավազաքարեր, տուֆոավազաքարեր:Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի 28a- V կարգ է:

1.6-2.2մ Վերին Յուրայի հասակի, ամուր, կրային ցեմենտով կապակցված մոխրա-դարչնագույնից մինչև կապտա-կեղտոտկանաչավուն ավազաքարեր, տուֆոավազաքարեր: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի 28 б - VI կարգ է:

ՆԿ15+70 – ՆԿ 20+00

0.0-6սմ Ասֆալտային շերտ

6սմ-1.3մ Բեկորախճային գրունտներ 20-25 ավազա-կավավազային լցանյութով: Գրունտների մշակման խումբը ըստ СНиП IV-5-82-ի (13) IV կարգ է:

1.30-1.8մ Վերին Յուրայի հասակի, խայտաբղետ գունավորմամբ, միջին ամրության, կավային ցեմենտով կապակցված ավազաքարեր, տուֆոավազաքարեր:Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի 28a- V կարգ է:

ՆԿ20+00 – ՆԿ 27+60

0.0-6սմ Ասֆալտային շերտ

6սմ-1.0մ Բեկորախճային գրունտներ 20-25 ավազա-կավավազային լցանյութով: Գրունտների մշակման խումբը ըստ СНиП IV-5-82-ի (13) IV կարգ է:

1.0-1.7մ Վերին Յուրայի հասակի, խայտաբղետ գունավորմամբ, միջին ամրության, կավային ցեմենտով կապակցված ավազաքարեր, տուֆոավազաքարեր:Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի 28a- V կարգ է

1.7-2.5մ Վերին Յուրայի հասակի, ամուր, կրային ցեմենտով կապակցված մոխրա-դարչնագույնից մինչև կապտա-կեղտոտկանաչավուն ավազաքարեր, տուֆոավազաքարեր: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի 28 б - VI կարգ է:

ՆԿ27+60 – ՆԿ 40+00

0.0-6սմ Ասֆալտային շերտ

6սմ-0.80մ Բեկորախճային գրունտներ 20-25 ավազա-կավավազային լցանյութով: Գրունտների մշակման խումբը ըստ СНиП IV-5-82-ի (13) IV կարգ է:

0.8-1.4մ Վերին Յուրայի հասակի, խայտաբղետ գունավորմամբ, միջին ամրության, կավային ցեմենտով կապակցված ավազաքարեր, տուֆոավազաքարեր:Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի 28a- V կարգ է:

1.4-2.0մ Վերին Յուրայի հասակի, ամուր, կրային ցեմենտով կապակցված մոխրա-դարչնագույնից մինչև կապտա-կեղտոտկանաչավուն ավազաքարեր, տուֆոավազաքարեր: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի 28 б - VI կարգ է:

ՆԿ40+00 – ՆԿ 54+50

0.0-6սմ Ասֆալտային շերտ

6սմ-0.50մ Բեկորախճային գրունտներ 20-25 ավազա-կավավազային լցանյութով: Գրունտների մշակման խումբը ըստ СНиП IV-5-82-ի (13) IV կարգ է:

0.50-1.7մ Վերին Յուրայի հասակի, խայտաբղետ գունավորմամբ, միջին ամրության, կավային ցեմենտով կապակցված ավազաքարեր, տուֆոավազաքարեր: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի 28a- V կարգ է:

1.7-2.5մ Վերին Յուրայի հասակի, ամուր, կրային ցեմենտով կապակցված մոխրա-դարչնագույնից մինչև կապտա-կեղտոտկանաչավուն ավազաքարեր, տուֆոավազաքարեր: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի 28 б - VI կարգ է:

ՆԿ54+50 – ՆԿ 63+90

0.0-0.6մ Բեկորախճային գրունտներ 20-25 ավազա-կավավազային լցանյութով: Գրունտների մշակման խումբը ըստ СНиП IV-5-82-ի (13) IV կարգ է:

0.6-2.5մ Վերին Յուրայի հասակի, խայտաբղետ գունավորմամբ, միջին ամրության, կավային ցեմենտով կապակցված ավազաքարեր, տուֆոավազաքարեր:Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի 28a- V կարգ է:

ՆԿ63+90 – ՆԿ 70+70

0.0-1.0մ Բեկորախճային գրունտներ 20-25 ավազա-կավավազային լցանյութով: Գրունտների մշակման խումբը ըստ СНиП IV-5-82-ի (13) IV կարգ է:

1.0-1.7մ Վերին Յուրայի հասակի, խայտաբղետ գունավորմամբ, միջին ամրության, կավային ցեմենտով կապակցված ավազաքարեր, տուֆավազաքարեր:Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի 28a- V կարգ է:

1.7-2.0մ Վերին Յուրայի հասակի, ամուր, կրային ցեմենտով կապակցված մոխրա-դարչնագույնից մինչև կապտա-կեղտոտկանաչավուն ավազաքարեր, տուֆավազաքարեր: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի 28 6 - VI կարգ է:

**ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի ջրագծի կառուցման հաշվետվության եզրակացություն**

Ուսումնասիրվող տարածքում երկրաբանական կառուցվածքը ներկայացված են գրունտների 3 տարբեր շերտերով:

Տեղամասում ստորերկրյա ջրերը ըստ ֆոնդային տվյալների մինչև 2մ խորությամբ չեն բացահայտվել և գտնվում են 5մ-ից ավելի խորը հորիզոններում:

Ուսումնասիրվող տարածքում գրունտները բարենպաստ են շինարարություն կատարելու համար, որպես հիմնատակ ծառայում են Շերտ 2, Շերտ 3, Շերտ 4, որոնք, ըստ մեր ֆոնդային տվյալների ունեն բավարար ֆիզիկամեխանիկական հատկություններ:

Սեյսմիկ հատկությամբ՝ ՀՀՇՆ 20.04.2020-ի տեղազննվող տարածքի գրունտները ըստ ֆիզիկամեխանիկական հատկանիշների ֆոնդային տվյալների II կարգի են:

Համաձայն 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ Amax=0,3g մինչև 9 բալ սեյսմիկայնություն:

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 47 սանտիմետր:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ տվյալ տարածքում բացակայում են

Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

**5.3 Շրջանի կլիմայական պայմանները**

Տավուշի մարզի կլիման բարեխառն է՝ չափավոր տաք ամառներով և մեղմ ձմեռներով, իսկ հյուսիսային և հյուսիս-արևելյան ցածրադիր գոտիներն աչքի են ընկնում չոր մերձարևադարձային կլիմայով: Մարզն ունի մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր և բուժիչ օդ: Ընդ որում, լեռնագրական առանձնահատկություններով պայմանավորված, մարզի հարավային և հյուսիսային մասերը կլիմայական պայմանների

առումով բավականին տարբերվում են: Հյուսիսային մասերում ձմեռը տաք է, սակավաձյուն, ամպամած օրերը քիչ:

Դիլիջան քաղաքին բնորոշ է մեղմ, լեռնա-անտառային չափավոր զով ամառը, արևաշատ տաք ձմեռը:

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ տվյալների օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 8,3 ՕC, բացարձակ նվազագույնը՝ - 23.0 ՕC, բացարձակ առավելագույնը՝ + 38.0 ՕC: Օդի հարաբերական խոնավությունը՝ 74%:

Տեղումների միջին քանակը կազմում է 639 մմ, ձյան ծածկույտի առավելագույն տասնօրյա հաստությունը՝ 53 սմ:

Քամու միջին տարեկան արագությունը հավասար է 1.8 մ/վրկ:

Ստորև բերված են տեղանքի կլիմայական պայմանները, որի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Դիլիջանի օդերևութաբանական կայանի դիտարկումները և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

*Աղյուսակ 4.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը*

| | Բարձրություն ծովի մակարդակից, մ | Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, $C^0$ | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Բացարձակ նվազագույն | Բացարձակ առավելագույն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | | | |
| Դիլիջան | 1256 | -1.5 | -1.0 | 2.2 | 7.7 | 12.0 | 15.2 | 18.3 | 18.1 | 14.3 | 9.3 | 4.3 | 0.4 | 8.3 | -23 | 38 |

*Աղյուսակ 4.2. Օդի հարաբերական խոնավությունը*

| | Բարձրություն ծովի մակարդակից, մ | Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, % | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Միջին ամսական ժ. 15-ին | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | հունվարին | օգոստոսին |
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | | | |
| Դիլիջան | 1256 | 63 | 65 | 70 | 72 | 78 | 79 | 77 | 78 | 79 | 78 | 73 | 70 | 74 | 51 | 60 |

*Աղյուսակ 4.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը*

| Բնակավայրի անվանումը | Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ | | | | | | | | | | | | | Ձնածածկույթ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ըստ ամիսների | | | | | | | | | | | | Տարեկան | Տասնօրյա առավելագույնը, սմ | Օրերի թիվը | Ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | | |
| Դիլիջան | 22 | 30 | 45 | 65 | 106 | 103 | 66 | 51 | 46 | 47 | 36 | 22 | 639 | 53 | 57 | 103 |
| | 35 | 33 | 42 | 43 | 58 | 62 | 55 | 47 | 45 | 45 | 49 | 33 | 62 | | | |

*Աղյուսակ 4.4. Քամու պարամետրերը*

| Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա) | Ամիսներ | Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների | | | | | | | | Անհողմությունների կրկնելիությունը,% | Միջին առավելագույն արագությունը,մ/վ | Միջին տարեկան արագությունը,մ/վ | Ուժեղ քամիներով ("15մ/վ" օրերի քանակը | Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հյուսիսային (Հս) | Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ) | Արևելյան (Արլ) | Հարավ-արևելյան (ՀվԱրլ) | Հարավ (Հվ) | Հարավ-արևմտյան (ՀվԱրմ) | Արևմտյան (Արմ) | Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ) | | | | | 20 | 50 | 100 |
| 875.6 | Հունվար | 3 | 19 | 2 | 3 | 22 | 32 | 15 | 4 | 28 | 2.1 | 1.8 | 4 | 20 | 22 | 24 |
| | | 1,6 | 1.7 | 1.8 | 2.4 | 2.8 | 2.5 | 2,0 | 1.5 | | | | | | | |
| | Ապրիլ | 4 | 41 | 6 | 4 | 13 | 20 | 9 | 3 | 31 | 2.0 | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1.6 | 2.2 | 2.0 | 2.4 | 2.5 | 2.3 | 1.6 | 1.5 | | | | | | | |
| | Հուլիս | 5 | 63 | 10 | 2 | 2 | 7 | 8 | 3 | 42 | 1.7 | | | | | |
| | | 1.9 | 2.5 | 2.4 | 1.4 | 1.4 | 1.3 | 1.1 | 1.4 | | | | | | | |
| | Հոկ-տեմբեր | 5 | 46 | 6 | 3 | 10 | 17 | 10 | 3 | 43 | 1.5 | | | | | |
| | | 1.7 | 2.2 | 1.9 | 1.7 | 1.9 | 1.7 | 1.4 | 1.4 | | | | | | | |

### 5.4. Մթնոլորտային օդի որակի բնութագիր

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևությաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի օքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Մոնիթորինգի կենտրոնը Դիլիջան քաղաքում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, հետևաբար մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ ՊՈԱԿ կողմից առաջարկած համապատասխան ձեռնարկ-ուղեցույցից[1]: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10-50 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.3 մգ/մ$^3$;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.05 մգ/մ$^3$;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.015 մգ/մ$^3$;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ$^3$:

### 5.5. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօդերևությաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի

[1] ՀՀ շրջակա միջավայրի նախարարության "Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն" ՊՈԱԿ. "ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները" ուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ:

2021 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 16%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 36%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 26%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 22%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

Դիտարկվող տարածքը գտնվում է Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքում: Տարածքի հիմնական ջրային զարկերակը Աղստև գետն է իր վտակներով (ամենամեծ վտակը համարվում է Գետիկը՝ 30 կմ): Աղստև գետի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 133 կմ: Բոլոր գետերի և գետակների ջրերը քաղցրահամ են: Մարզում կան նաև լճեր՝ Պարզ, Ժանգոտ, Գոշի լիճը: Մարզը հարուստ է նաև հանքային ջրերով, որոնցից առավել հայտնի է Բլդանի աղբյուրը՝ «Դիլիջան» անվամբ: Մարզում կան նաև ջրվեժներ: Խնձորուտի վրա է գտնվում 15 մ բարձրությունից թափվող Շառաչ ջրվեժը (Բայղուշի ձորում): Խաչաղբյուր գետի վրա՝ Ենոքավան գյուղից 3 կմ հեռավորության վրա է գտնվում Լաստիվեր ջրվեժը:

Մարզում են գտնվում թվով 5 ջրամբարներ՝ Ջողազի (45 մլն խմ), Հախումի (12 մլն խմ), Տավուշի (5 մլն խմ), Այգեձորի (4 մլն խմ) և Խաշթառակի (0.12 մլն խմ), որոնք հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակով: Ջողազի ջրամբարը չի օգտագործվում սահմանային լինելու պատճառով, մնացած ջրամբարները ևս սահմանային են և մասամբ են օգտագործվում:

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև և ներքև գնահատվել է «միջակ» (3- րդ դաս), Դիլիջան քաղաքից վերև՝ պայմանավորված երկաթով և կախութային չոր նյութերով, Դիլիջան քաղաքից ներքև՝ նաև բարիումով: Իջևան քաղաքից վերև ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով և կախութային չոր նյութերով: Իջևան քաղաքից ներքև ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով, երկաթով, բարիումով և կախութային չոր նյութերով[2]:

«Դիլիջան» ԱՊ-ի /ԴԱՊ-ի/ գետերը պատկանում են Կուր գետի ավազանին: Հարուստ գետային ցանցը տարածաշրջանի նշանավոր առանձնահատկությունն է: Գետերն ու գետակները տիպիկ լեռնային են, սնվում են ձնհալի և անձրևաջրերից, ինչպես նաև բազմաթիվ ստորերկրյա աղբյուրներից: Գետերի հիմնական ուղղություններն են հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք: Գետերի մեծ մասը սակավաջուր են, հեղեղներ հիմնականում տեղի են ունենում գարնանը՝ առաջացնելով սելավներ: Այս գետերը բնութագրվում են բարձր անկմամբ և թեքություններով, արագ հոսքով, քարի և ավազի

[2] http://www.armmonitoring.am/

բարձր պարունակությամբ, ինչպես նաև տարբեր վայրերում առկա ջրվեժներով և սահանքներով, ինչպես բնորոշ է լեռնային գետերին:

Պարկը նաև հայտնի է իր լճակներով, որոնցից ամենամեծն ու ամենահայտնին Պարզ լիճն է, որը գտնվում է Արեգունի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին՝ 1400մ բարձրության վրա, Դիլիջան քաղաքից 8կմ դեպի հյուսիս-արևելք: Պարզ լիճն ունի սողնաքային ծագում և զբաղեցնում է մոտ 2 հեկտար մակերես: Երկարությունը մոտ 250 մետր է, լայնությունը՝ 70 մ: Լճի միջին խորությունը 6 մետր է, ջրի ծավալը 83,8 հազար խորանարդ մետր, իսկ ջրհավաք ավազանը 1,52 կմ2 է: Պարկի երկրորդ հայտնի լիճը Գոշալիճն է (Տզրկա), որը գտնվում է Պարզ լճից արևելք՝ ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա: Գոշ լիճն ունի մոտ 56մ երկարություն և 270մ լայնություն, դրա մակերեսըմոտ 1,53 հեկտար է, իսկ ջրբաժան հատվածի մակերեսը 1,34 քառակուսի կմ է, իսկ միջին խորությունը 6մ է: Պարկում կան նաև մի քանի ավելի փոքր լճակեր:

Ծրագրով նախատեսված աշխատանքները չեն կարող ազդել ջրային ռեսուրսների որակական և քանակական ցուցանիշների վրա:

### 5.5. Հողային ռեսուրսներ

Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գերակշռում են հիմնականում երկու հողատիպեր՝ անտառային և լեռնամարգագետնային: Անտառային գոտում գերակշռում են անտառային շականագույն հողերը, որոնք աչքի են ընկնում բարձր հզորությամբ և հորիզոնների լավ դիֆերենցվածությամբ: Ողջ անտառային գոտում հանդիպում են կարբոնատներով հարուստ, ապարների վրա զարգացած՝ տափաստանացված շականակագույն հողերը, մոզայիկ կառուցվածքով: Գործունեության ենթակա տարածքների հողային տիպը անտառային մուգ դարչնագույն, չափավոր խոնավ հողերն են:

ԴԱՊ-ի հողային ծածկույթը ներկայացված է հիմնականում երկու հողատիպերով՝ անտառային և լեռնամարգագետնային: Անտառային գոտում գերակշռում են շագանակագույն և դարչնագույն անտառային հողերը, որոնք աչքի են ընկնում հզորությամբ և հորիզոնների լավ դիֆերենցվածությամբ: Այս հողատեսակները հիմնականում ձևավորվում են բարձր խոնավությամբ, կայուն ջերմաստիճան ունեցող տարածքներում:

Դարչնագույն անտառային հողերը գերակշռում են համեմատաբար տաք շրջաններում՝ մինչև 1500մ բարձրության վրա խոնավության տարբեր պարունակությամբ, կաղնու և բոխու անտառածածկի առկայության դեպքում: Հողը ձևավորող հիմնական քարերն են կրաքարը, դոլոմիտները և պորֆիրները (marlstones, dolomites, porphyries): Այս հողերին հատուկ է բարձր կլանողականությունը, չեզոք կամ շատ թեթև արտահայտված ալկալինային ռեակցիաները և լավ արտահայտված կարբոնիտային շերտը: Այս հողերին բնորոշ է դարչնագույն կամ մուգ շագանակագույն երանգավորումը, ինչպես նաև հումուսով հարուստ հողերին հատուկ հատիկավոր կառուցվածքը և կավով հարուստ միջին շերտը: Հողի այս տեսակը բաժանվում է երեք ենթատեսակների՝ լվացվող (առանց կրաքարի),

տիպիկ (մասնակի լվացվող) և կարբոնատ, որն իր հերթին բաժանվում է մարգագետնային, կրային, կավային և այլ հողատիպերի:

Շագանակագույն անտառահողերը հանդիպում են հյուսիսային լանջերին՝ մինչև 1800մ բարձրության վրա, հիմնականում բոխու և հաճարենու անտառներով ծածկված տարածքներում: Լվացման և կավի կուտակման գործընթացները նպաստում են այս հողերի կազմավորմանը, որն ունի կմախքանման կառուցվածք և առանձնանում է ժայռային բեկորների մեծ քանակությամբ: Ամբողջ հողային կառուցվածքին բնորոշ է շագանակագույն գունավորումը և թույլ գոտիավորումը: Առանձնացվում են երկու ենթատիպեր՝ ցածր և բարձր հագեցվածությամբ հողային շերտեր: Ցածր հագեցվածությամբ հողերն ավելի հզոր են, մինչդեռ հողի երկու ենթատեսակներում էլ հիդրոլիտիկ թթվայնությունը բարձր է:

Երբ էրոզիոն ճնշումը ցածր է, շագանակագույն հողերն իրենց տեղը զիջում են սև հողերին, որոնք ձևավորվում են 1700-1800մ բարձրության վրա՝ անտառային վեգետացիայի անկման հետևանքով, իսկ ավելի բարձր տեղանքներում՝ լեռնամարգագետնային հողերին: Անցումային հողերը, որոնք անտառային շագանակագույնից անցնում են լեռնամարգագետնայինի, հիմնականում ձևավորվում են ավելի բարձր բաշխման գոտում՝ գերազանցապես ենթալպյան գոտում: Այս հողատեսքերը հանդիպում են հարուստ խոտածածկով նոսր անտառներում: Կարբոնատով և հումուսով հարուստ հողերը ձևավորվում են կարբոնատով հարուստ հիմնահողերում: Սրանք, տափաստանային շագանակագույն հողերի հետ մեկտեղ, խճանկարի պես տարածվում են անտառային գոտով մեկ:

Լեռնամարգագետնային սև հողերը ձևավորվում են ենթալպյան գոտում՝ 2400մ բարձրության վրա: Հողի այս տեսակը ձևավորվում է խոնավության բարձր աստիճանի և թույլ գոլորշիացման պայմաններում, ինչպես նաև հացազգի և տարախոտային բույսերի առկայության դեպքում: Հողերին բնորոշ է լվացման ռեժիմը, ինչպես նաև ճիմահողը, իսկ չքայքայված հատվածներում դրանք ունեն հումուսի հաստ շերտ (մինչև 40սմ): Այս հողերը ընդհանուր առմամբ հարուստ են ազոտով, ֆոսֆորով և ազատ երկաթով: Հետագայում կարող են առանձնացվել մասնատված, ճիմահող-տորֆային, ճիմահողային և թույլ ճիմահողային հողի ենթատեսակներ: Մանրախճային, թույլ զարգացած և մակերեսային հողերը բավականին տարածված են:

Ալլուվիալ հողերը տարածված են ԴԱՊ-ի տարածքում գտնվող համեմատաբար լայնարձակ հովիտներում, որոնց բնորոշ է բերրիության բարձր մակարդակը, և որոնք վերածվում են մշակովի հողերի: Փլուզումները, սելավները, սողանքները և լանջային այլ երևույթները հաճախ են հանդիպում պարկի տարածքում:

Հայաստանի հյուսիսարևելյան շրջանները, ներառյալ Աղստև գետի ավազանը, աչքի են ընկնում սողանքների թվով և ինտենսիվությամբ: Սողանքները մեծապես ազդում են ռելիեֆի ձևավորման վրա: Բավարար խոնավությունը, բարձր զառիթափերի առկայությունը, գրունտային ջրերը, նախալեռների լվացումը, ուժեղ նստվածքները, ակտիվ տեղումները և այլ գործոններ նպաստում են սողանքների առաջացմանը: Մարդածին գործոնները, հատկապես անօրինական ծառահատումը, լանջերի գերխոնավեցումը,

շինարարական աշխատանքները, պայթեցումները և հողային աշխատանքները ևս նպաստում են սողանքերի ակտիվացմանը: Խոշոր սողանքների վայրեր են Դիլիջանը, Հաղարծինը, Պարզ լիճը, Ֆիոլետովոն և այլն: Սողանքները տարածված են հատկապես Դիլիջան քաղաքում:

Հյուսիսային լանջերին կլիմայական պայմանները ավելի բարենպաստ են, վեգետատիվ ծածկը՝ ավելի հարուստ, իսկ սելավները՝ հազվադեպ: Սելավները առաջանում են առատ տեղումների ժամանակ (անձրև կամ կարկուտ), երբ կարճ ժամանակահատվածում բարձր քանակով տեղումներ են լինում:

ԴԱՊ-ի տարածքին բնորոշ են թույլ հողմահարումները, էրոզիոն գործընթացները և փարթամ վեգետատիվ ծածկը: Կլիմայական պայմանների անապատացման միտումները, անտառային ծածկի կրճատումը, ինչպես նաև ջրառատ անձրևների ակտիվությունը, բնական լանդշաֆտների խախտումը, էրոզիոն գործընթացները և մարդածին գործողությունները նպաստում են սելավների ակտիվացմանը:

2022 թվականի 2-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվա-ծության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Տավուշի, Կոտայքի, Արարատի, Վայոց ձորի և Լոռու մարզերում: Տավուշի մարզում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.3 անգամ, պղնձի պարունակությունը՝ 14.7-35.0 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.9-8.4 անգամ, քրոմի պարունակությունը՝ 7.3-16.2 անգամ, նիկելի պարունակությունը՝ 8.0-10.3 անգամ և արսենի պարունակությունը՝ 4.0-19.5 անգամ[5]:

### 5.6. Անտառ

Տարածաշրջանի բուսականության գերիշխող տիպը անտառայինն է: Այստեղ գերակշռում են սաղարթավոր տերևաթափ տեսակները՝ արևելյան հաճարենին (Fagus orientalis), վրացական կաղնին (Quercus iberica), խոշորառէջ կաղնին (Q. macranthera), կովկասյան բոխին (Carpinus caucasica), ղաժին կամ արևելյան բոխին (C. orientalis): Սրանց ուղեկցում են դաշտային (Acer campester), սրատերև (A. platanoides) և բարձրլեռնային (A. trautvetteri) թխկիները, լորենին (Tilia caucasica), հացենին (Fraxinus excelsior), արոսենին (Sorbus aucuparia, S. graeca) և այլն: Հանդիպում են նաև վայրի պտղատուներ՝ կովկասյան տանձենին (Pyrus caucasica), արևելյան խնձորենին (Malus orientalis), սալորենին (Prunus divaricata), մամխենին (P. spinosa), ընկուզենին (Juglans regia), սովորական տխլենին (Corylus avellana), հոնին (Cornus mas), սզնու տարբեր տեսակներ (Crataegus), զկեռենի (Mespilus germanica), թխենի (Padus) և այլն: Հարուստ է նաև հատապտղատուների բազմազանությունը՝ հաղարջենի (Ribes), մոշենի (Rubus caesius), մորի (R. idaeus), կոկռոշենի (Grossularia) և այլն: Անտառի վերին սահմանը եզրափակում են կեչու կորաբուն մերձալպյան նոսրանտառային մնացորդները՝ ելունդավոր և թավոտ կեչիների (Betula pendula, B. pubescens), կաղամախու (Populus tremula), այծուռենու (Salix caprea) գերակշռությամբ: Հիմնական անտառկազմող ծառատեսակների գերակշռությամբ ծառուտները ներկայացվում են կամ միատարր կաղնուտների, հաճարկուտների և բոխուտների ձևով, կամ էլ խառը՝ դրանց տարբեր խմբավորումների տարբերակներով:

Անտառային էկոհամակարգերը ըստ ուղղաձիգ բարձունքային գոտիականության և դիրքադրության ունեն հետևյալ տարածվածությունը: Միջին անտառային գոտու հարավահայաց լեռնալանջերին տարածվում են վրացական կաղնու, իսկ հանդիպակաց հյուսիսահայաց լանջերին՝ արևելյան հաճարենու անտառային զանգվածները: Դրանից վեր, սկսած 1500 մ բարձրությունից, անտառային գոտին ներկայացնում է խոշորառէջ կաղնին: Բոխին հանդիպում է գրեթե բոլոր տիպի ծառուտներում: Ընդ որում՝ արևելյան բոխին (ղաժին), որպես կանոն, հանդիպում է ստորին անտառային գոտու (մինչև 1500 մ) ենթանտառում, իսկ կովկասյան բոխին՝ մինչև 2000 մ:

«Դիլիջան» ազգային պարկի անտառային էկոհամակարգերին բնորոշ է ասեղնատերև ծառատեսակների առկայությունը: Սոճին (Pinus sosnowskyi) որոշ տեղերում առաջացնում է խիտ ծառուտներ, հանդիպում է Արեգունի և Փամբակի լեռանշղթաների լանջերին, մասնավորապես՝ Դիլիջանի լեռնանցքի ոլորանի շրջանում: Հանդիպում է նաև Դիլիջան քաղաքային բնակավայրի և մերձակա լանջերին: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում գիհու նոսրանտառները, որոնք տարածված են Գետիկի հովտում, ինչպես նաև Իջևանի լեռնաշղթայի հյուսիսային հովտահայաց չոր լանջերին: Լավ պահպանված գիհուտներ կան հատկապես Աբեղաքար սարի, Աղստև գետին հովտահայաց, ժայռոտ լանջերին: Գիհու նոսրանտառները ներկայացնում են բազմապտուղ (Juniperus polycarpos) և սրաթեփուկ կամ գարշահոտ (J. foetidissima) գիհիները: Պարկի տարածքում աճում են նաև գիհու թփային տեսակները՝ երկարատերև (J. oblonga) և ցածրաճ (J. depressa):

Բուսականության այլ տիպերը ներկայացված են փոքր կղզյակներով՝ անտառային բացատներում կամ անտառի վերին սահմանից վեր:

«Դիլիջան» ազգային պարկի ստորին հատվածում (մինչև 1100 մ բարձրության վրա) փոքր տարածքներով հանդիպում են շիբլյակ կոչված թփուտները, ուր գերիշխում են ցաքի փշոտ (Paliurus spina-christi) և չորասեր թփերի մի քանի այլ տեսակներ՝ ծորենի սովորական (Berberis vulgaris), չմենի ամբողջաեզր (Cotoneaster integerrimus), մասրենի շան (Rosa canina), փռշնի կովկասյան (Celtis caucasica), դժնիկ Պալլասի (Rhamnus pallasii) և այլն: Այս համակեցություններում խոտային ծածկույթը շատ բազմազան է և ներկայացված է հիմնականորեն չորասեր խոտաբույսերով: Այստեղ հանդիպում են նաև տափաստանային բուսականության փոքր կղզյակներ բոտրիոխլոայի (Bothriochloa ischaemum) գերակայմամբ, որոնք հիմնականում երկրորդային ծագում ունեն: Անտառազուրկ ոչ մեծ տարածքներում հանդիպում են այս շրջանի համար ոչ բնորոշ շյուղախոտ վալեսյանի (Festuca valesiaca) գերակշռությամբ տափաստանային խմբավորումները, որոնց կազմում բավականին շատ են մարգագետնային բուսատեսակները: (1800)- (1900) մ-ից բարձր տարածված են մերձալպյան մարգագետինները, ուր գերիշխում են խառը տարախոտ- հացազգային համակեցությունները: Հիմնական գերակշռող տեսակներն են բարակոտնուկ սանրանմանը (Koeleria cristata), դաշտավլուկ մարգագետայինը (Poa pratensis), դաշտավլուկ կաղնուտայինը (Poa nemoralis), ոզնախոտ կծկավոր (Dactylis glomerata), խմրախոտ բուրավետը (Anthoxanthum odoratum), ոսկեվարսակ սիբիրյանը (Trisetum sibiricum) և այլն: Այստեղ տարածված են համակեցություններ, ուր գերակայում են վարդակակաչ փնջաձևը

(Anemone fasciculata), ձկին գորտնուկանմանը (Trollius ranunculinus) և կեղծ ղանձլամեր սպիտակը (Veratrum album), ընդ որում՝ վերջինի տարածումը ուղղակիորեն կապված է արածեցման ինտենսիվության հետ: Մերձալպյան գոտու որոշ հատվածներում տարածված են մերձալպյան բարձրախոտերի համակեցությունները, որտեղ ներկայացված են շուշան հայկականը (Lilium armenum), ընձախոտ արևելյանը (Aconitum orientale), զիվան հսկայական (Cephalaria gigantea), ոզնախոտ կծկավորը (Dactylis glomerata), զանգակ խմբվածը (Campanula glomerata), թթվիճ խոշորածաղիկը (Betonica macrantha) և այլն: «Դիլիջան» ազգային պարկի տարածքի ձորերի ժայռոտ հատվածներում ներկայացված է ինտրազոնալ ժայռային բուսականությունը, որի կազմում հատուկ հետաքրքրություն են ներկայացնում պտերների մի քանի տեսակներ՝ բանպոտ Բռաունի (Polystichum braunii), բասբայջ սովորական (Polypodium vulgare), ասպլենի (Asplenium) որոշ տեսակներ: Ազգային պարկի տարածքում գտնվող լճերի և գետերի ափերին ներկայացված է ջրաճահճային բուսականությունը, որի կազմում են հիմնականում Հայաստանի համար սովորական տեսակներ՝ ուռենի (Salix), բարդի (Populus), բոշխ (Carex), գորտնուկ (Ranunculus), կնյուն (Juncus) ցեղերի ներկայացուցիչներ:

## 5.7. Կենսաբազմազանություն

### *5.7.1. Բուսական աշխարհ*

Դիլիջան համայնքի տարածքը գտվում է բուսական Կովկասյան պրովինցիայում՝ Իջևանի շրջանում: Դիլիջան քաղաքային բնակավայրում և մոտակայքում բույսերի էնդեմիկ տեսակներ չեն հայտնաբերվել: Այստեղ տարածված են կաթնափուշ բծավոր (Sylibum Marianum) բուսատեսակներ: Դիլիջանում տարածված են դեղաբույսեր՝ ալոճների մուգ արնագույն և այլ տեսակներ (Crataegus Atrosanguinea), գետնամորի անտառային (Fragaria Veska):

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1200 տեսակ, որից 977 տեսակը աճում է պարկի տարածքում: Դրանցից 51-ը ծառատեսակներ են, 47-ը՝ թփեր, 696-ը՝ բազմամյա խոտաբույսեր, 176-ը միամյա և երկամյա բույսեր, 7-ը մակաբույծներ: Նշված տեսակներից 7-ը հանդիսանում են Հայաստանի էնդեմիկներ: Պարկի պահպանական գոտում հանդիպում են անոթավոր բույսերի 958 տեսակներ (դրանցից 225-ը չեն հանդիպում ազգային պարկի տարածքում): Պահպանական գոտում (Աղստև գետի ձորի լանջերի բաց տեղանքներում) աճում է ևս մեկ էնդեմիկ տեսակ՝ Պսեֆելուս Փամբակի (Psephellus pambakensis), որը բավականին լայն տարածում ունի Լոռիում և Իջևանում: Ազգային պարկի ֆլորայի 17 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Ազգային պարկի ֆլորայի 54 տեսակներ հանդես են գալիս որպես դեղաբույսեր: Դրանց մի մասը չեն կազմում խիտ պոպուլյացիաներ, այլ ցրված հանդիպում են ազգային պարկի տարածքում և այդ պատճառով ներկայումս տնտեսական հետաքրքրություն չեն ներկայացնում, իսկ 41 տեսակներ ուտելի են:

“Դիլիջան» ազգային պարկի տարածքից և դրա պահպանական գոտուց հայտնաբերվել են 480 տեսակի և ենթատեսակի սնկեր, որոնցից 320-ը պատկանում են ագարիկալ սնկերին, 124-ը՝աֆիլոֆորայիններին և 36-ը՝ գաստերոմիցետներին: Առավել տարածված են դառնամատիտեղ (Russula), կաթնասունկ (Lactarius), սարդոստայնասունկ (Cortinarius), թելիկասունկ (Inocybe), ճանճասպան (Amanita) ցեղերի միկորիզագոյացնող տեսակները, ինչպես նաև բնափայտ քայքայող ականջասունկ սովորական (Pleurotus ostreatus), կոճղասունկ իսկական (Armillaria mellea) տեսակները և Աբեթասնկեր (Polyporaceae) ընտանիքի ներկայացուցիչները: Նշված սնկերից 176-ը ուտելի են, որոնցից առավել տարածված է և վաճառվում է շուկաներում միայն ականջասունկ սովորական կամ կախասունկ (Pleurotus ostreatus) տեսակը: 38 տեսակի սնկեր թունավոր են և տեղացի բնակիչները դրանց կոչում են գարշասնկեր (պոգանկա), խուսափում են հավաքելուց, և վերջին տարիներին թունավորման դեպքեր չեն գրանցվել:

«Դիլիջան» ազգային պարկի» տարածքում աճող անոթավոր բույսերից 17-ը ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (9-ը՝ վտանգված (EN), 5-ը՝ խոցելի(VU), իսկ 3-ը՝ անհետացման եզրին գտնվող (NT) կարգավիճակով)՝

Պսեֆելուս դեբեդի (Psephellus debedicus) (EN), Պոպուլիկ Մարշալի (Corydalis marschalliana) (EN), Պապլոր դժգույն (Muscari pallens) (EN), Արքայածաղիկ բլրակային (Fritillaria collina) (EN), Էպիպոգիում անտերև (Epipogium aphyllum) (EN), Բանպոտ Բրաունի (Polystichum braunii) (EN), Հողմածաղիկ գորտնուկային (Anemone ranunculoides) (EN), Թեզիում փռված (Thesium procumbens) (EN), Օրտիլիա փոքր (Orthilia secunda) (EN),Եզնակող Կոզո-Պոլյանսկու (Bupleurum koso-poljanskyi) (VU), Գնարբուկ սքանչելի (Primula amoena) (VU), Շիկատակ (Atropa bella-donna) (VU), Կենի հատապտղային (Taxus baccata) (VU), Շյուղախոտ անտառային (Festuca drymeja) (VU), Ձնծաղիկ Միրզոևայի (Merendera mirzoevae) (NT), Շուշան հայկական (Lilium armenum) (NT), Սպնդուկ միջին (Pyrola media) (NT):

14 տեսակ էնդեմներ են, որոնցից 7-ը՝ Հայաստանի, 3-ը՝ Կովկասի, 4-ը՝ Անդրկովկասի:

**Հայաստանի էնդեմիկներ**

Եզնակող Կոզո-Պոլյանսկու (Bupleurum koso-poljanskyi) Պսեֆելուս դեբեդի (Psephellus debedicus) Պսեֆելուս փամբակի (Psephellus pambakensis), Ձնծաղիկ Միրզոևայի, erendera mirzoevae) , Խլածաղիկ Օլգայի (Scrophularia olgae) Կտավախոտ զանգեզուրի (Linaria zangezura) Մասրենի Սոսնովսկու (Rosa sosnovskyana);

**Կովկասի էնդեմիկներ**

Ճռճռուկ կովկասյան (Cerastium holosteum) Պապլոր դժգույն (Muscari pallens) Արքայածաղիկ բլրակային (Fritillaria collina) chelkownikowii) Արոսենի հայաստանյան (Sorbus ajastana) Բարակոտնուկ Ալբովի-լոռիի (Koeleria albovii subsp. loriensis) Բարակոտնուկ Ալբովի- Ֆոմինի (Koeleria albovii subsp. fominii);

**Անդրկովկասի էնդեմիկներ**

Կտավախոտ Շելկովնիկովի (Linaria schelkownikowii) Արոսենի հայաստանյան (Sorbus ajastana) Բարակոտնուկ Ալբովի-լոռիի (Koeleria albovii subsp. loriensis) Բարակոտնուկ Ալբովի- Ֆոմինի (Koeleria albovii subsp. fominii):

Անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում կարմիր գրքում գրանցված տեսակաները բացակայում են:

### 5.7.2 Կենդանական աշխարհ

**Անողնաշարավորներ**

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում հանդիպում են փափկամարմինների (Mollusca) 69 և հոդվածոտանիների (Arthropoda) 143 տեսակներ: Վերջիններս պատկանում են միջատների (Insecta) դասին: Նշված տեսակներից 7-ը Հայաստանի էնդեմիկներ են: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում ընդգրկված են 3 տեսակներ, որոնք հանդիպում են «Դիլիջան» ազգային պարկի տարածքում: Դրանք են՝ Parnassius apollo L., Cerambyx cerdo acuminatus Motsch., Rosalia alpina L. և Proserpinus proserpina Pall-ը: Անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում կարմիր գրքում գրանցված տեսակներ չկան:

**Սողուններ**

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում բացահայտվել են սողունների 19 տեսակներ, որոնք բաժանվում են հետևյալ կարգաբանական խմբերի.

- Մողեսներ (Lacertilia) – 12 տեսակ.
- Օձեր (Serpentes) – 6 տեսակ.
- Կրիաներ (Testudines) - 1:

Նշված սողուններից ոչ մեկը Հայաստանի Կարմիր գրքում գրանցված չէ:

**Կաթնասուններ**

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են կաթնասունների 49 տեսակներ: Դրանք բաժանված են հետևյալ 6 կարգաբանական դասերի.

- Միջատակերներ (Insectivora) – 9 տեսակ.
- Կրծողներ (Rodenti) – 17 տեսակ.
- Նապաստակակերպեր (Logomorpha) –1 տեսակ.
- Ձեռքաթևավորներ (Chiroptera) –7 տեսակ.
- Գիշատիչներ (Carnivora) – 12 տեսակ.
- Կճղակավորներ (Artiodactyla) – 3 տեսակ:

Նշված կաթնասուններից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են 6-ը՝ Եվրոպական լայնականջ ծալքաշուրթը, հնդկական վայրենակերպը կամ մացառախոզը, խայտաքիսը, ջրսամույրը, գորշ արջը և անտառային կատուն:

### 5.7.3 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրականացվում են արդեն իսկ կառուցապատված ասֆալտապատ տարածքներում, որտեղ բուսահողը բացակայում է: Նոր տարածքների օտարում ջրագծերի կառուցման համար չի նախատեսվում, շինարարական աշխատանքներն իրականացվելու են նախկինում անցկացված խողովակաշարի սպասարկման գոտում՝ ճանապարհի

երկարությամբ: Աշխատանքների ընթացքում նախատեսվում է Դիլիջան համայնքի, «Դիլիջան» ազգային պարկի, հողերի ժամանակավոր օգտագործում:

Ջրագծի անցկացման շինարարական բոլոր տեսակ գործողությունների համար անհրաժեշտ է հատկացնել հնարավորինս նեղ միջանցք՝ ջրագծի ուղեգծով՝ բացառելով տեխնիկատրանսպորտային միջոցների կայանումը «Դիլիջան» ազգային պարկի տարածքում կամ խողովակակարի սպասարկման գոտուց դուրս տարածքներում:

Մինչ շինարարությունը սկսելը գործունեության համար նախատեսված տարածքներում առկա թփերը պետք է հեռացվեն: Պետք է հետևել, որպեսզի բուսականության մաքրումը լինի միայն խողովակաշարի ուղեգծի երկայնքով՝ սահմանված միջանցքից դուրս ազդեցությունները կանխելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր վնասի դեպքում ծառերի արմատները ոչ-վեգետացիոն ժամանակաշրջանում ավելի հեշտ են վերականգնվում, խրամուղիների փորման աշխատանքներն իրականացվելու են բույսերի մինչ- կամ հետ-վեգետացիոն ժամանակահատվածներում: Դա կմեղմի կամ հնարավորինս կբացառի նախատեսվող աշխատանքների վնասակար ազդեցությունը հարակից տարածքների բնական բուսածածկի և ծառաթփային բույսերի վրա: Խրամուղիների հետլիցքից հետո տարածքները հարթեցվում են և մաքրվում շինարարական թափոններից: Մնացորդային բնահողը/գրունտը ամբողջովին կօգտագործվի շրջակա տարածքների հարթեցման համար

Տարածքում հայտնաբերված ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի առանձնյակների տեղափոխումն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի թիվ 781-Ն որոշման պահանջներով:

Գործունեության տարածքում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014թ. N781-Ն որոշմամբ նախատեսված միջոցառումների հետ միասին տնտեսական գործունեություն իրականացնողները՝

- առանձնացնում են օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.
- ժամանակավորապես սահմանափակում են առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.
- նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր

գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

Հողերում հայտնաբերված՝ կարմիր գրքում գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների առանձնյակների տեղափոխումն իրականացվում է տնտեսական գործունեություն իրականացնողների միջոցների հաշվին՝ լիազորված պետական մարմնի հետ կնքված համապատասխան պայմանագրի համաձայն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի տեղափոխման վայրը:

### 5.7.4 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Կենդանական աշխարհի վրա ազդեցությունը կարող է արտահայտվել հողային աշխատանքների ժամանակ միջատների բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով խրամուղու փորման աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

Կենդանական աշխարհի վրա ազդեցությունը մեղմացնելու նպատակով անհրաժեշտ է բացառել ՝

- գիշերային ժամերին մեքենամեխանիզմների լուսավորությամբ կամ այլ լուսավորության կիրառմամբ աշխատանքները,
- տրանսպորտային շարժն ԱՊ-ի տարածքում՝ հատկապես Պարկի պահպանության օբյեկտ հանդիսացող կարևոր կենդանատեսակների բազմացման շրջանում,
- աղմկահարույց տեխնիկական միջոցների աշխատանքը ԱՊ-ի տարածքում,
- շինարարական աշխատանքները ԱՊ-ի պահպանման գոտու այն տեղամասերում, որոնք հանդիսանում են կարևոր կենդանատեսակների բնադրավայրեր կամ միգրացիոն ուղիներ:

## 5.8 Տարածաշրջանի վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Տավուշի մարզում ստեղծվել են բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ), այդ թվում՝ մեկ ազգային պարկ, 5 արգելավայր և 2 դենդրոպարկ (Իջևանի դենդրոպարկ, Բերդի սորաններ):

Տավուշի մարզում են գտնվում Իջևանի, Արջատխլենու, Գանձաքարի-Վերին Աղդանի, Ձիկատարի, Ախնաբադի կենու պուրակ պետական արգելավայրերը: Սակայն նշված արգելավայրերը գտնվում են ծրագրի ազդման գոտուց հեռու և իրենց վրա չեն կրելու որևէ բացասական ազդեցություն:

Ծրագրի իրականացման տարածքը մասամբ գտնվում է «Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի տարածքում /մասնակիորեն արտաքին ցանցի որոշ հատված/: Անտառային տարածքներում ջրատարները կառուցվել են դեռևս 1980-ական թվականներին: Վթարային վիճակում գտնվելու հանգամանքով պայմանավորված սույն Ծրագրով նախատեսվում է կառուցել նոր ջրագիծ;

*«Դիլիջան» ազգային պարկը* ստեղծվել է 1958 թվականին: Սկզբնապես եղել է որպես արգելոց, իսկ 2002 թվականին վերափոխվել է ազգային պարկի: Ստեղծման գլխավոր նպատակը բուսական և կենդանական աշխարհի պահպանումը, հարստացումը և տեղական պայմաններում նոր տեսակների ստացումն է: Դիլիջանի արգելոցը զբաղեցնում է Աղստև գետի վերին հոսանքի ավազանը՝ Հալաբի արևելյան, Միափորիի հյուսիսարևմտյան և Արեգունի լեռնաշղթայի հյուսիսարևելյան լանջերը: «Դիլիջան» ազգային պարկը բաժանված է 4 տեղամասերի, դրանք են՝

1. «Դիլիջան»
2. «Շամախյան»
3. «Հաղարծին»
4. «Գոշ»:

«Դիլիջան» ազգային պարկը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 21-ի «Դիլիջան» ազգային պարկ կազմակերպելու մասին» N 165 որոշմամբ՝ Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի 1958 թվականի սեպտեմբերի 13-ի «Հայկական ՍՍՌ բնության պահպանության մասին» օրենքի կիրառման մասին» N 341 որոշմամբ կազմակերպված «Դիլիջան» պետական արգելոցի և դրան հարակից տարածքների սահմաններում: Պարկի ստեղծման նպատակներն են՝

ա) Աղստև և Գետիկ գետերի ավազանների ջրային ու ցամաքային բնական էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի ապահովումը, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ու պատմամշակութային հուշարձանների պահպանությունը.

բ) հյուսիսային Հայաստանին բնորոշ հազվագյուտ և անհետացող վայրի բույսերի ու կենդանիների տեսակների, գենոֆոնդի և դրանց ապրելու միջավայրի պահպանությունը.

գ) բնական լանդշաֆտների, դրանց առանձին տարրերի, բնական գործընթացների և երևույթների գիտական ուսումնասիրությունը՝ ուղղված պարկի տարածքի բնական

էկոհամակարգերում ընթացող գործընթացների կանխատեսմանն ու գնահատմանը, բուսական և կենդանական աշխարհի գենոֆոնդի պահպանմանը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ու բնության պահպանության գիտական հիմունքների մշակմանը, պարկին հարակից տարածքների համար բնության պահպանության և օգտագործման արդյունավետ ձևերի մշակման բազայի ապահովմանը:

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում առկա են բազմաթիվ բույսեր և կենդանիներ, որոնք հաշվառված են ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում: Կառուցապատվող տեղամասի մի մասը գտնվում է «Դիլիջան» ազգային պարկի տարածքում՝ նախկինում կառուցված ջրագծի օտարման գոտում՝ անմիջապես ճանապարհի հարևանությամբ: Նախագիծը համաձայնեցվել է Դիլիջանի համայնքապետարանի և «Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի հետ: Համաձայն «Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի 2022 թվականի նոյեմբերի 9-ի N 20-720 գրության՝ Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և գործունեության իրականացման /ջրագծերի վերանորոգում/կառուցում/ վերաբերյալ ՊՈԱԿ-ը առարկություն չունի:

## 5.9 Բնության հուշարձաններ

Գործունեության ենթակա տարածքը չի առնչվում բնության հուշարձանների հետ:

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածաշրջանիի բնության հուշարձանների ցանկը: Համաձայն որոշման հավելվածի Տավուշի մարզում ցուցակագրված են հետևյալ երկրաբանական և կենսաբանական հուշարձանները *(Հավելվածը խմբ.08.01.09 N 53-Ն):*

| NN ը/կ | Անվանումը (նկարագիրը) | Տեղադիրքը |
|---|---|---|
| | **Երկրաբանական հուշարձաններ** | |
| 1. | «Մոլլաքար» ժայռ | Տավուշի մարզ, Իջևան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, Իջևան-Երևան խճուղու ձախ կողմում |
| 2. | «Անանուն» պլագիոգրանիտներ | Տավուշի մարզ, Բերդ ավանից 6.5 կմ հվ-արմ, անտառտնտեսության մոտ |
| 3. | «Անանուն» դայկայանման մարմիններ | Տավուշի մարզ, Բերդ ավանի հս-արմ եզրին |
| 4. | «Անանուն» փոխակերպարային (մետամորֆիզացված) թերթաքարեր | Տավուշի մարզ, Վարագաձոր գետի վերին հոսանքում, Բերդ քաղաքից մոտ 20 կմ հվ-արմ |
| 5. | «Կալաքար» լեռ | Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից 1.5 կմ հվ |
| 6. | «Անանուն» սյունաձև էքստրուզիվ մարմին՝ նեկկ | Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից 2 կմ հվ |
| 7. | «Անանուն» դայկայանման | Տավուշի մարզ, Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Տավուշ |

| | | |
|---|---|---|
| | մարմիններ | գետի ձախ վտակի հովտում |
| 8. | «Փայտասար» քարանձավների համալիր | Տավուշի մարզ, Կողբ գյուղից 4 կմ հարավ |
| 9. | «Անանուն» կվարցային դիորիտներ և գաբրո-դիորիտներ | Տավուշի մարզ, Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Տավուշ գետի կիրճի աջ լանջին |
| 10. | «Անանուն» շերտագրական մերկացում | Տավուշի մարզ, Չինչին գյուղի հվ-արլ եզրին |
| 11. | «Անանուն» սանդղափուլ քարափներ | Տավուշի մարզ, Չինչին գյուղից 2.0 կմ հվ-արմ |
| 12. | «Օձաքար» լեռնագագաթ | Տավուշի մարզ, Պառավաքար գյուղից 3 կմ հս-արմ, Վաղաշեն տանող ճանապարհի աջ կողմում |
| 13 | «Քվարցային պլագիոպորֆիրների սյունաձև անջատումներ» | Տավուշի մարզ, Հովք գյուղից 900 մ դեպի հս-ալ, Աղստև գետի ձախ ափին, Երևան- Իջևան ավտոմայրուղու ձախ կողմում |
| | Կենսաբանական հուշարձաններ | |
| 14. | «Նոյեմբերյանի սոսի» | Տավուշի մարզ, քաղ. Նոյեմբերյան, Չինարաձորում |
| 15. | «Վարդան Մամիկոնյանի կաղնի» | Տավուշի մարզ, գ. Ակնաղբյուր, ծ.մ-ից 900 մ բարձրության վրա |
| 16. | «Սարի գյուղի սոսի» | Տավուշի մարզ, գ. Սարիգյուղ, Երևան-Նոյեմբերյան ճանապարհից աջ, ծ.մ-ից 750 մ բարձրության վրա |
| 17. | «Գետահովիտի մամռապատ ժայռ» | Տավուշի մարզ, Գետահովիտ գյուղի մոտ, Սառնաջուր գետի ձախ ափին, մոտ 700-800 մ բարձրության վրա |
| 18. | «Տանձուտ» | Տավուշի մարզ, Աղավնավանք գյուղի մոտ |
| 19 | «Զորականի սոսի» | Տավուշի մարզ, Զորական գյուղական համայնքի վարչական սահմանում |
| 20. | «Ոսկեպարի կենի» | Տավուշի մարզ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Զուջևանի անտառպետություն, Ոսկեպար համայնքից 6 կմ հարավ-արևմուտք |
| 21. | «Զիկատարի տանձուտ» | Տավուշի մարզ, «Զիկատար» ուսումնական կենտրոնից հարավ-արևմուտք, 600 մ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Զիկատարի անտառպետություն |
| 22. | «Զոնջոլկուտ» | Տավուշի մարզ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Դովեղի անտառպետություն, Բարեկամավան համայնքից 1 կմ հարավ-արևմուտքՏավուշի մարզ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Դովեղի անտառպետություն, Բարեկամավան համայնքից 1 կմ հարավ-արևմուտք |

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում կան թվով 2 բնության հուշարձաններ, որոնք են՝ «Քվարցային պլագիոպորֆիրների սյունաձև անջատումներ» երկրաբանական հուշարձանը /որը գտնվում է Երևան-Իջևան ավտոմայրուղու ձախ կողմում, գործունեության վայրից 2կմ հեռավորության վրա/ և «Տանձուտ» կենսաբանական հուշարձանը, որը գտնվում է Տավուշի մարզի Աղավնավանք գյուղից /գործունեության վայրից/ մոտ 1.5 կմ հեռավորության վրա: Շինարարական աշխատանքների իրականացման վայրերը չեն առնչվում վերը նշված բության հուշարձանների հետ:

### 5.10 Պատմամշակութային հուշարձաններ

Տավուշի մարզի Թեղուտ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից, ներառված է ընդամենը 7 հուշարձան (2 միավոր):

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | կոորդ | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| Մատուռ | 11-12դդ. | | — | 10.29/1.1.1 | Հ | ավերված |
| Մատուռ | 11-12 դդ. | | — | 10.29/1.2.1 | Հ | ավերված |
| Ջիթհան | 12-14 դդ. | գյուղատեղիի հվ-ամ մասում, «Մորուտա ձորի» ձախակողմում | — | 10.29/1.3 | Հ | ավերված |
| Դամբարանադաշտ | Ք.ա. 2-1 հզ | գյուղից 3 կմ հս-աե, Մորուտա գետի ձախ ափին, «Հնդզան» հանդամասում | — | 10.29/2 | Հ | |
| Գյուղատեղի «Հնդզան» | 10-14դդ. | գյուղից 3 կմ հս-աե, համանուն հանդամասում | — | 10.29/1 | Հ | |
| Գերեզմանոց | 10-14դդ. | գյուղատեղիի աե եզրին, անտառում | — | 10.29/1.1 | Հ | |
| Գերեզմանոց | 10-14 դդ. | գյուղատեղիի ամ կողմում, «Մորուտա ձորի» աջակողմում | — | 10.29/1.2 | Հ | |

Ծրագրի իրականացման տարածքները չեն առնչում վերոնշյալ պատմամշակութային հուշարձանների հետ: Ծրագրի շրջանակներում ապահովվելու է նաև Թեղուտից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Հաղարծին եկեղեցական համալիրի

ջրամատակարարումը: Նոր նախատեսվող ջրատարի միացման հանգույցում կկառուցվի ջրամատակարարման հոր, որտեղ կտեղադրվի եկեղեցական համալիրը սպասարկող ջրագծի կարգավորիչ փականը:

Համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. Ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

## 6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

### 6.1 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շինարարության փուլում հնարավոր է դիտվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության մի շարք բացասական երևույթները, ինչպես օրինակ՝ մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների աղտոտում, հողերի և լանդշաֆտի դեգրադացիա, հողերի էրոզիա, որը կարող է առաջանալ փորված/հանված հողի և շինարարական թափոնների ոչ պատշաճ հեռացման/ տեղադրման, շինարարության ընթացքում վառելիքաքսուկային և այլ նյութերի արտահոսքի, ժամանակավոր շինհրապարակների օգտագործման (շին. ճամբարներ, մեքենաների ավտոկայանատեղեր, պահեստավայրեր և այլն), օդի ժամանակավոր աղտոտում՝ կապված շինարարության ընթացքում բեռնատարների երթևեկության գրաֆիկի հետ, փորման աշխատանքների ժամանակ աղմուկ և տատանումներ, երթևեկության խաթարում՝ պայմանավորված շին.մեքենաների և սարքավորումների շարժման հետ, ինչպես նաև հնարավոր ազդեցություններ բուսածածկի վրա:

Ծրագրի շինարարության փուլում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները ներկայացվում են ստորև:

**(ա) Շրջակա միջավայրի օդի աղտոտում**

Շինարարական աշխատանքների ընթացքում փորման-բեռնման աշխատանքների արդյունքում առաջանում են անօրգանական փոշու արտանետումներ: Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի աշխատանքի ընթացքում առաջանում են փոշու /երթևեկության ժամանակ/ և դիզելային վառելիքի այրման ընթացքում ծխագազերի արտանետումներ: Եռակցման աշխատանքների ընթացքում առաջանում են եռակցման աերոզոլի և մանգանի օքսիդների արտանետումներ:

Ստորև ներկայացված են արտանետումների հիմնական աղբյուրները.

- անօրգանական փոշու արտանետումներ փորման-բեռնման աշխատանքների ժամանակ,
- արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման և երթևեկության ժամանակ,
- բենզինի գոլորշի,
- արտանետումներ զոդման աշխատանքների ժամանակ:
- օդի աղտոտում հողի հանման և բեռնման և շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

**(բ) Ջրային ռեսուրսների վրա ազդեցություններ**

Ընդհանուր առմամբ, շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները նվազագույն կլինեն, քանի որ Ծրագիրն ուղղված է ջրային ռեսուրսի կառավարմանը: Սակայն հնարավոր է, շինհրապարակներում պահեստավորված շինարարական նյութերով, շինարարական հոսքաջրերի առաջացում, ինչպես նաև շինարարության ընթացքում աշխատողների կենսագործունեության արդյունքում տնտեսա-կենցաղային հոսքաջրերի և պինդ թափոնների առաջացում:

**(գ) Ջրօգտագործում և ջրահեռացում**

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է վարչական աշխատողների և բանվորների խմելու, կենցաղային/տնտեսական նպատակների համար, ինչպես նաև շինարարական հրապարակների ջրցանի, տրանսպորտային միջոցների սպասարկման համար:

Ջրցանի համար նախատեսված ջուրը բերվելու է ջրցան մեքենաների միջոցով, իսկ խմելու համար ջուրը բերվելու է այդ նպատակի համար նախատեսված տարողություններով:

Շինարարության փուլում կենցաղային կեղտաջրերը հավաքվելու են անջրանցիկ նյութերից կառուցված կեղտաջրերի հավաքման հորում /ԿՀՀ/, որը շինհրապարակի երկարությամբ պետք է տեղափոխվի: Նախատեսվում է շաբաթական մեկ անգամ հատուկ մեքենաներով արտահանել հորի պարունակությունը տեղական մարմինների հետ համաձայնեցված կոյուղու կոլեկտոր:

Վերը նշված ազդեցությունը կկրի ժամանակավոր բնույթ, սակայն կմեղմացվի Հավելված 1- ում՝ Բնապահպանական կառավարման պլանում, ներկայացված միջոցառումների ժամանակին և պատշաճ իրականացման արդյունքում:

**(դ) Հողային աշխատանքներ**

Խրամուղիների փորման և խողովակաշարերի ապամոնտաժման աշխատանքները կարող են ժամանակավոր վնասակար ազդեցություն ունենալ հողային ծածկույթի և շրջապատող բուսական ծածկույթի վրա: Հանված գրունտի պահպանման հետևանքով, մինչև ետլիցք կատարելը կարող է վնասվել շրջակա տարածքի հողային ծածկույթը, քանի

որ խողովակաշարի անցկացման գոտում բացակայում է հողաբուսաշերտը: Մինչև հողային աշխատանքների իրականացումը խրամուղու տարածքի երկայնքով պատահական աճած թփուտները պետք է հեռացվեն:

Նախագծման և նախնական գնահատման փուլում խրամուղու երկայնքով իրականացվել են ակնադիտական հետազոտություններ, որոնց արդյունքում խրամուղու երկայնքով կենդանիների բներ չեն հայտնաբերվել:

Պահանջվում է խրամուղու տարածքի երկայնքով հանված գրունտը տեղադրել այդ նպատակի համար նախատեսված վայրում՝ անմիջապես փորված խրամուղու երկայնքով:

Ըստ բուսաբանական հետազոտությունների, ծրագրի համար նախատեսված տարածքներում հանդիպող բուսատեսակները ընդգրկված չեն ՀՀ Կարմիր Գրքում:

**(ե) Շինարարական նյութերի հանում**

Շինարարության համար պահանջվող նյութերը նախընտրելի է ձեռք բերել արտոնագրված մատակարարներից և շահագործվող աղբյուրներից:

**(զ) Շինարարական թափոնների առաջացում**

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, ծրագրի ազդակիր տարածքներում առաջացող տարբեր տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա, մասնավորապես՝ առաջացնելով լանդշաֆտի փոփոխություն, աղտոտել ջրային և հողային ռեսուրսները և մթնոլորտային օդը, ինչպես նաև ազդել մարդկանց առողջության վրա:

Թափոններ կարող են առաջանալ քիչ քանակությամբ մնացորդային հողային զանգվածների տեսքով, քանի որ փորված հողի և բուսահողի հիմնական մասն օգտագործվում է ետլիցք կատարելու համար: Խողովակաշարերի անցկացման տարածքներում, որտեղ կարող է հանդիպել թփեր, որոնք ևս հանդիսանում են թափոններ և պետք է հեռացվեն շինհրապարակից: Թափոնների մյուս տեսակները, որոնք առաջանում են ընդհանուր շինարարական գործողություններից, նույնպես ենթադրվում են ոչ մեծ քանակությամբ և կարող են ներառել՝ մետաղական և պլաստիկ դատարկ տարաներ, շինարարական աղբ, շինհրապարակներում կամ բակերում հավաքված կենցաղային աղբ, ինչպես նաև վտանգավոր թափոնների տեսակներ, օրինակ՝ վառելիքաքսուկային յուղեր, ներկեր, լուծիչներ, մեքենաների ֆիլտրեր, մարտկոցներ և անվադողեր:

## 6.2.Սոցիալական ազդեցությունները շինարարության փուլում

Շինարարության հետ կապված ժամանակավոր ազդեցություններն են.

**ա. երթևեկության աճ**

Համայնքում սպասվում է կարճաժամկետ երթևեկության աճ՝ կապված շինարարական տրանսպորտային միջոցների շարժման և մեքենաների շահագործման հետ: Սա կարող է արգելափակել ճանապարհները:

**բ" մուտքի արգելափակում**

Իրենց տներին, դաշտերին և գույքին հասնելու անհնարինության կամ անհարմարություն շինարարական ճամբարների, մեքենաների տեղադրման կամ շինարարական աշխատանքների պատճառով:

**գ. աղմուկ և փոշի**

Մեքենաների աշխատանքը կառաջացնի փոշի և աղմուկ, որը կարող է առողջական խնդիրներ առաջացնել համայնքում:

**դ. առողջական խնդիրներ**

Շինարարության ընթացքում անորակ և անհամապատասխան շինանյութերի օգտագործման արդյունքում աշխատողների առողջությանը կարող է վնաս հասցվել:

**ե. պատահարներ շինարարական հրապարակում**

Շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության կանոնների խախտման պատճառով տեղի ունեցած պատահարները կարող են մարմնական վնաս հասցնել շինհրապարակում գտնվող անձանց, երբեմն նույնիսկ մահացու հետևանքներով:

**Հողօգտագործում**

Աշխատանքների ընթացքում նախատեսվում է Դիլիջան համայնքի, «Դիլիջան» ազգային պարկի, հողերի ժամանակավոր օգտագործում:

**Ժամանակավոր տեղական զբաղվածություն**

Շինարարության փուլում դրական սոցիալական ազդեցությունը հանդիսանում է տեղի չորակավորված աշխատուժի ժամանակավոր զբաղվածության հնարավորությունը:

**Ակտիվների վնասում**

Ապամոնտաժման աշխատանքների ժամանակ կարող են վնասվել սեփականատերերի ակտիվները՝ մասնավոր, համայնքային կամ ազգային պարկի գույքը:

**Շինարարական ճամբարներ**

Շինարարական ճամբարները պետք է տեղադրված լինեն համայնքային հողերում, ինչը նախապես պետք է համաձայնեցված լինի համայնքի հետ՝ մասնավոր հողերի օգտագործումից խուսափելու համար: Սակայն, եթե չօգտագործվող համայնքային հողերը մատչելի չլինեն, հողի սեփականատեր համայնքի հետ պետք է կնքվի վարձակալության համաձայնագիր:

## 6.3 Մեղմացման և փոխհատուցման միջոցառումներ

Ծրագրի նախագծման և շինարարության փուլերի համար նախատեսված են մեղմացնող միջոցառումներ, որոնք կձեռնարկվեն իրականացնող մարմինների կողմից՝ վերը նշված բնապահպանական և սոցիալական հնարավոր բացասական

ազդեցությունները կանխարգելելու և/կամ մեղմացնելու համար:

Բնապահպանական և սոցիալական մեղմացնող միջոցառումների իրականացման պահանջները կներառվեն տեխնիկական մասնագրերում և մրցութային փաստաթղթերում: Այդ միջոցառումները կիրականացվեն շինարարության կապալառուի կողմից՝ հնարավոր ազդեցություններից խուսափելու, դրանք կանխարգելելու, մեղմացնելու կամ շտկելու համար:

### 6.3.1 Բնապահպանական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում

Շինարարության փուլի ընթացքում լանդշաֆտի վատթարացումը, հողերի էրոզիան, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների և հողերի աղտոտումը կանխարգելելու և/կամ նվազագույնի հասցնելու համար նախատեսված համապատասխան միջոցառումները պետք է իրականացվեն կապալառուի կողմից: Այդ աշխատանքները ներառում են՝

- Արդեն իսկ գոյություն ունեցող թափոնների հեռացման վայրերի օգտագործում (նախագծման փուլում ձեռք բերված համապատասխան թույլտվություններում և համաձայնագրերում ամրագրված պայմանների համաձայն), թափոնների ժամանակավոր կուտակման վայրերի հստակ սահմանում (այնպես, որ այդ վայրերը որևէ վնաս չհասցնեն բուսածածկին և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչներին), որոնք պետք է պահպանվեն շինարարության կապալառուի կողմից:
- Խախտված տարածքների վերականգնում բերելով սկզբնական վիճակի (աշխատանքները սկսելուց առաջ գրունտը հանել և պահել համապատասխան վայրում):
- Վառելիքաքսուկային և քիմիական նյութերի պահեստավորման վայրերի կահավորում համապատասխան պարագաներով՝ հողերի և շրջակա տարածքների աղտոտման վտանգը նվազեցնելու համար:
- Երթևեկության և շինարարական հրապարակների մուտքի և ելքի սկզբունքների ապահովում՝ սահմանելով հստակ երթուղիներ, կայանման վայրեր և աշխատանքների իրականացման ժամանակացույց:

**Կենսաբազմազանության վրա ազդեցությունը մեղմացնելու նպատակով հարկավոր է՝**

- Բացառել ազդեցությունը շրջակա տարածքի բուսականության վրա՝ հողային աշխատանքների հիմնական մասը պլանավորելով և իրականացնելով վեգետացիոն ոչ ակտիվ ժամանակաշրջանում.
- Սահմանափակել բնական միջավայրերի խախտումը՝ շինարարական գործողությունների համար հատկացնելով նեղ միջանցք խողովակաշարի ուղեգծով: Արգելել տեխնիկական միջոցների/սարքավորումների տեղաշարժը և

շինանյութերի/թափոնների տեղադրումը խողովակի սպասարկմաննգոտուց դուրս,

- Խստորեն վերահսկել հանդիպող բուսականության մաքրումը խողովակաշարի ուղեգծի երկայնքով՝ սահմանված միջանցքից դուրս ազդեցությունները կանխելու համար,

Կենդանական աշխարհի վրա ազդեցությունը մեղմացնելու նպատակով բացառել՝

1. գիշերային ժամերին մեքենամեխանիզմների լուսավորությամբ կամ այլ լուսավորության կիրառմամբ աշխատանքները,
2. տրանսպորտային շարժն ԱՊ-ում՝ հատկապես Պարկի պահպանության օբյեկտ հանդիսացող կարևոր կենդանատեսակների բազմացման շրջանում,
3. շինարարական աշխատանքները ԱՊ-ի պահպանման գոտու այն տեղամասերում, որոնք հանդիսանում են կարևոր կենդանատեսակների բնադրավայրեր կամ միգրացիոն ուղիներ:

Շինարարական հրապարակում առաջացած փոշու և աղմուկի նվազեցման միջոցառումներ՝ հատկապես այն դեպքում, երբ աշխատանքներն իրականացվում են բնակելի և հասարակական վայրերի մոտ: Այդ նպատակի համար շինարարական նյութերի և թափոնների տեղափոխման համար անհրաժեշտ է օգտագործել փակ կամ ծածկով բեռնատար մեքենաներ: Հողային աշխատանքները կատարել փոշեորսիչով կահավորված տեխնիկական միջոցներով և սարքավորումներով: Տրանսպորտային միջոցները և տեխնիկան պետք է պարբերաբար ստուգել, կարգավորել և ապահովել ձայնի խլացուցիչներով: Շինհրապարակներն ու մոտեցնող ճանապարհները պետք է պարբերաբար ջրվեն, իսկ պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածները խոնավացվեն փոշին նվազեցնելու նպատակով (բացի ձմռանից և տեղումներով առատ ամիսներից):

Շինհրապարակի որակը, բանվորական հագուստի մշակույթը, անվտանգության կանոնների պահպանումը պետք է կազմակերպվի և մշտադիտարկվի համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:

**Բուսատեսակների պահպանություն**

Շինարարական բոլոր տեսակ գործողությունների համար անհրաժեշտ է հատկացնել հնարավորինս նեղ միջանցք՝ խողովակաշարի ուղեգծով: Մինչ շինարարությունը սկսելը գործունեության համար նախատեսված տարածքներում առկա թփերը պետք է հեռացվեն: Պետք է հետևել, որպեսզի բուսականության մաքրումը լինի միայն կառուցվող խողովակաշարի ուղեգծի երկայնքով՝ սահմանված միջանցքից դուրս ազդեցությունները կանխելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարակից տարածքներում ծառերի արմատները վնասվելու դեպքում ոչ-վեգետացիոն ժամանակաշրջանում ավելի հեշտ են վերականգնվում, խրամուղիների փորման աշխատանքներն իրականացվելու են բույսերի մինչ կամ հետ-վեգետացիոն ժամանակահատվածներում: Դա կմեղմի կամ հնարավորինս կբացառի նախատեսվող աշխատանքների վնասակար ազդեցությունը հարակից տարածքների բնական բուսածածկի և ծառաթփային բույսերի վրա:

Շինարարական աշխատանքներն իրականացնելիս շինարարը կառաջնորդվի այնպիսի սկզբունքներով, որ բացառվի ԴԱՊ-ի տարածքում որևէ ծառաթփուտային

բուսականության հատումը և հնարավոր բացասական ազդեցությունների առաջացումը: Պետք է նշել, որ ջրագծի ծրագիծն անցնում է ճանապարհի երկայնքով՝ գոյություն ունեցող ենթակառուցվածքների հարևանությամբ, գործող ջրագծի սպասարկման գոտու սահմաններով:

### 6.4 Թափոնների կառավարում

Թափոնների կառավարման նպատակն է՝ կապալառուի և աշխատակիցների համար սահմանել շինարարության ընթացքում առաջացող թափոնների հեռացման, տեղադրման, կամ օգտագործման ճիշտ սկզբունքներ:

Անվտանգ թափոնները ներառում են՝ շինարարական և կոշտ կենցաղային թափոնները, բուսական մնացորդները, որոնք կարող են հանդիպել շինհրապարակներում թփուտների տեսքով և խոչընդոտել ապամոնտաժման աշխատանքների իրականացմանը: Այս թափոնների ոչ պատշաճ պահեստավորումը, տեղափոխումը և հեռացումը կարող են առաջացնել բացասական ազդեցություններ՝շրջակա տարածքների համար:

Շինարարության ժամանակ առաջացող վտանգավոր թափոնները կարող են ներառել՝ մարտկոցներ, ներկեր, լուծիչներ, օգտագործված յուղեր, քսուքներ և քիմիական այլ թափոններ:

Կեղտաջրերը ներառում են՝ շինարարության հոսքաջրերը (որոնք կարող են առաջանալ շինհրապարակներում) և կենցաղային կոյուղաջրերը (որոնք կարող են առաջանալ աշխատողների տնտեսական գործունեության արդյունքում) և կարող են պարունակել աղտոտիչներ և պաթոգեն տարրեր:

Վերը նշված թափոնների վնասակար ազդեցություններից խուսափելու համար նախընտրելի են կառավարման հետևյալ սկզբունքները.

- խուսափել թափոնների արտադրությունից,
- կրկնակի օգտագործել, կամ հնարավորինս վերամշակել թափոնները,
- առաջացող թափոնները հեռացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքի ղեկավարի, կամ համապատասխան մարմինների հետ համաձայնեցված,
- գոյություն ունեցող թափոնների հեռացման վայրերի օգտագործում (նախագծման փուլում ձեռք բերված համաձայնագրերում ամրագրված պայմանների համաձայն),
- շինանյութերը (իներտ նյութեր, բետոն) ձեռք բերել լիցենզավորված մատակարարներից,
- թափոնների ժամանակավոր կուտակման վայրերի հստակ սահմանում (բնապահպանական տեսանկյունից առավել ընդունելի վայրեր, որոնք կհաստատվեն համապատասխան մարմինների /Դիլիջան ԱՊ-ի և Դիլիջանի համայնքապետարանի կողմից):

Շինարարական աշխատանքների ընթացքում յուղի և վառելիքի պահեստավորման կամ տեխնիկայի վերալիցքավորման ժամանակ արտահոսքը շրջակա տարածքներ և ջրային հորիզոններ բացառելու նպատակով շինճամբարում պետք է կազմակերպվի

վառելիքի ժամանակավոր լցակետ, որը համալրված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով: Աշխատանքների ավարտից հետո այն պետք է ապամոնտաժվի: Արտահոսքերի դեպքում անհրաժեշտ է կատարել մաքրման աշխատանքներ և տեղյակ պահել ՇՄՆ-ին:

Օգտագործելով վերոնշյալ սկզբունքները և կիրառելով համապատասխան մեթոդները՝ թափոնների կառավարման հետ կապված ռիսկերը շինարարության ընթացքում կհասցվեն նվազագույնի:

Կապալառուն պետք է աշխատանքները կազմակերպի այնպես, որ կանխի շրջակա միջավայրի աղտոտումը շինարարական թափոնների, նավթամթերքների, քիմիական նյութերի միջոցով: Կապալառուն պարտավոր է ապահովել թափոնների և շինարարական աղբի հեռացումը: Թափոնների հեռացումը չպետք է հանգեցնի ստորջրյա ջրերի աղտոտմանը: Կապալառուն պարտավոր է նախատեսել շինարարական փոշուց օդի աղտոտվածության նվազեցմանն ուղղված միջոցառումներ: Օժանդակ շինությունները, պահեստները, բնակելի շենքերը պետք է տեղակայվեն, հնարավորության դեպքում, շինհրապարակի ներսում:

Եռակցման էլեկտրոդների մնացորդները /մոտ 0.1 տոննա/շին ժամանակահատված/ կհավաքվեն հատուկ մետաղական տարաներում և ժամանակավորապես կպահվեն եռակցման վայրի մոտ, այնուհետև կտեղափոխվեն հատուկ կազմակերպության կողմից:

Նախատեսվող գործունեության ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և փորման աշխատանքներ ընթացքում առաջացած մնացորդային հողային զանգվածներ /հիմնականում հանված բնահողը, որը ծառայում է որպես պատնեշ և տեղում օգտագործվում է/: Մնացորդային հողային զանգվածը և առկա ջրթողի քայքայված բետոնի ծավալը, որը սահմանված կարգով նախատեսված է տեղափոխել Դիլիջանի համայքապետարանի կողմից տրամադրված համապատասխան աղբավայր ծածկով ապահովված բեռնատարներով՝ համաձայն կնքված պայմանագրի:

Շինարարական աշխատանքներից առաջացող թափոնների ծավալը կազմում է մոտ 240 խմ, որը տեղափոխվելու է Դիլիջան համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված՝ համապատասխան քաղաքային աղբավայրեր:

Շինարարության ընթացքում օժանդակ գործընթացներից կարող են առաջանալ այլ թափոններ և ներառել՝ բանեցված շարժիչների յուղեր, բանեցված դողածածկաններ, բանեցված կապարե կուտակիչներ և խոտան ասֆալտբետոնյա ծածկույթը և այլն/ որոնց բնութագրերի /կազմ, ծավալ, վտանգավորության դաս/ և կառավարման վերաբերյալ մանրամասն նկարագիրը կներկայացվեն ՇՄԱԳ-ում: Հաշվի առնելով տարածքի զգայուն էկոհամակարգը, շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քսայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրկանացվի մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա հնարավորինս բացառել վտանգավոր թափոնների առաջացումը:

Իսկ շինարարության ընթացքում աշխատողների կենցաղային թափոնները կհեռացվեն մոտակա աղբահավաք տարողություններ: Օրական կտրվածքով կառաջանա 0.1 – 0.2 խ.մ. կենցաղային աղբ:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Շինարարության և շահագործման փուլում առաջացած կենցաղային աղբը աղբահավաք ծառայության կողմից կտեղափոխվի մոտակա աղբավայր՝ նախապես պայմանավորվելով Դիլիջանի համայնքապետարանի ղեկավարության հետ:

Շինարարության ընթացքում վերոնշյալ սկզբունքների կիրառումը թույլ կտա նվազագույնի հասցնել թափոնների կառավարման հետ կապված բնապահպանական ռիսկերը:

### 6.5.Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում

Շինարարության հետ կապված ժամանակավոր ազդեցություններ

Շինարարության կապալառուն պետք է պատշաճ կերպով տեղեկացնի ազդակիր համայնքին՝ շինարարական աշխատանքների սկսվելու մասին, որի արդյունքում կարող են ժամանակավորապես փակվել ճանապարհները կամ խոչընդոտներ առաջանալ ճանապարհներին, փոշու և աղմուկի մակարդակը կարող է ավելանալ, ճանապարհները ժամանակավորապես կարող են փակվել և կարող են խոչընդոտներ ստեղծվել: Նման ազդեցությունները մեղմելու նպատակով կապալառուն կիրականացնի հետևյալ միջոցառումները.

**ա. երթևեկության աճ**

Կապալառուն համայնքին կառաջարկի շինարարական տեղամասը շրջանցող ճանապարհ:

**բ. մուտքի արգելափակում**

Կապալառուն շինարարական ճամբարները, շինարարական տեղնիկան կտեղադրի բնակավայրից հեռու, հանրային կառույցների, մասնավոր գույքի և/կամ հողերի մուտքը չարգելափակելու համար:

**գ. աղմուկ և փոշի**

Շինարարության և սարքավորումների աշխատանքի հետևանքով առաջացող փոշու և աղմուկի ազդեցությունը մեղմելու նպատակով հարկավոր է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները և բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,

- խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում:

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

Աղմուկի մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *ԲԿՊ-ում* (Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարում):

Բնակավայրերում աշխատանքներ իրականացնելիս, կիրառել փոշու կառավարման տեխնոլոգիաներ: Մթնոլորտի գետնամերձ շերտում արագ ցրման հետևանքով արտանետումները չեն գերազանցի թույլատրելի նորմերը, հայտում նախատեսված միջոցառումների իրականացմամբ, քանի որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է բաց տարածքում, քամու միջին արագության պայմաններում արտանետումները ենթակա են արագ ցրման: Մթնոլորտային օդի պահապանությանն ուղղված բնապահպանական միջոցառումների համալիր ցանկը բերվում է ԲԿՊ-ի՝ Մթնոլորտային օդի աղտոտում և կառավարում ենթաբաժնում:

**դ. առողջական խնդիրներ**

Աշխատողների շրջանում ալերգիկ, շնչառական և այլ առողջական խնդիրներ չառաջացնելու նպատակով, կապալառուն պետք է կիրառի միջազգային չափորոշիչներին համապատասխանող շինանյութեր:

**ե. Շինարարական աշխատանքների հետ կապված անվտանգության ռիսկերը** նվազեցնելու կամ դրանցից խուսափելու համար, առաջարկվում են հետևյալ մեղմացնող միջոցառումները.

- բարձրացնել իրազեկվածությունը շինարարական աշխատանքների ժամանակ բացասական ազդեցությունների վերաբերյալ,
- ապահովել, որ բանվորները և տեղանքի ցանկացած այցելու ապահովված լինի և օգտագործի անձնական պաշտպանիչ արտահագուստ,
- ապահովել, որ բանվորները տեղամասի անվտանգության վերապատրաստում ստանան
- ապահովել, որ խոշոր սարքավորումներ աշխատեցնողները պատշաճ կերպով վերապատրաստված և լիցենզավորված լինեն,
- ապահովել, որ շինարարական սարքավորումները ստուգված և լիցենզավորված լինեն,
- ապահովել, որ շինարարական տեխնիկան օգտագործվի խստորեն հետևելով շահագործման հրահանգներին,

- ունենալ առաջին օգնության բժշկական փաթեթներ և հակահրդեհային սարքավորումներ,
- աշխատանքային ժամերից դուրս արգելել գործունեությունը տեղանքում,
- ապահովել, որ ակտիվ աշխատանքային տարածքները լինեն ցանկապատված, այնպես որ երեխաները, մարդիկ չկարողանան մուտք գործել և վնասվել:

**Հողերի ժամանակավոր օգտագործում**

Շինարարության ընթացքում հողը կօգտագործվի սեփականատիրոջից, վարձակալից նախապես ձեռքբերված համաձայնությունների շրջանակներում:

Հողային ռեսուրսների պահպանության հիմնական միջոցառումը բուսահողի պահպանությունն է, որը տվյալ գործունեության ենթակա տարածքում բուսահողը բացակայում է:

Շրջակա տարածքների հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել շինհրապարակում՝ բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել՝ տարածքը բերել նախկին տեսքի, մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. Ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

## 6.6 Դրական սոցիալական ազդեցություններ

Թեղուտ բնակավայրի ջրագծի կառուցման աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում են հետևյալ դրական սոցիալ-տնտեսական ազդեցությունները.

- ջրօգտագործողների ջրամատակարարման պայմանների և կենսամակարդակի բարելավում
- գյուղատնտեսական հողերի օգտագործման մակարդակի բարձրացում
- գյուղատնտեսական արտադրության արդյունավետության և արտադրողականության բարձրացում
- ոռոգման ջրի առավել արդյունավետ օգտագործում
- խոցելի և աղքատ բնակչության հնարավորությունների ընդլայնում
- ազդակիր համայնքների բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում:

Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա բարելավել նաև առավել խոցելի խավերի սոցիալական պայմանները: Ծրագիրը դրական ազդեցություն կունենա ջրամատակարարման համակարգի ազդեցության գոտում գտնվող Թեղուտ բնակավայրի բնակչության վրա՝ խթան հանդիսանալով նրանց սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը:

### 6.7. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում
- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ:

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների

***Շինարարական աշխատանքների ժամանակ հնարավոր արտակարգ իրավիճակներից*** խուսափելու նպատակով շինարարական տեղամասում պարբերաբար կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:

- մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:

- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես անվտանգության սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ):

- աշխատող բանվորական կազմին կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովեն խմելու ջրի, կենցաղային կեղտաջրերի հեռացման և հանգստի կազմակերպան պայմանները և այլն:

- Հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողությունները կիրականացվեն հատուկ մասնագիտացված կենտրոններում:

- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի համայնքի բժշկական հաստատությունը:

- Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:

- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան, որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել:

- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

***Շինարարական աշխատանքների ժամանակ հակահրդեհային միջոցառումների*** նպատակով անհրաժեշտ է՝

– շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվեն հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:

– Շինհրապարակում գտնվող էլեկտրական ենթակայանը, ավտոտրանսպորտային միջոցների և տեխնիկայի կայանման վայրերը պետք է համալրված լինի հակահրդեհային սարքավորումներով, միջոցներով:

– Շինհրապարակում նախատեսել հրշեջ հիդրանտի տեղադրում, հրդեհաշիջման համար ապահովել ջրաղբյուրների ճանապարհների և անցումների ազատ ելքերը, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

– Տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ,

Մշտապես իրականացնել արտադրական հրապարակի, աշխատանքային հրապարակների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

– Նշանակել պատասխանատու, որի պարտավորությունների մեջ կմտնի հակահրդեհային միջոցառումների կիրառումը:

– Մշակել «Արտակարգ իրավիճակների ռիսկը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու գործողությունների ծրագիր», որն իր մեջ կներառի անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ իրականացվող միջոցառումները և հրդեհային անվտանգությունը:

– Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովվման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ

առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

### 6.8 Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմացումը շահագործման փուլում

***Հիդրոտեխնիկական հանգույցների կանխարգելումը հեղեղումներից***

Ջրագծերի շահագործման ընթացքում հիմնական բնապահպանական ռիսկը կապված է խողովակաշարի խցանման և խափանման հետ: Այդ երևույթը բացառելու համար, անհրաժեշտ է մշտապես հետևել խողովակաշարերի աշխատանքին և վերահսկել անցողունակությունը՝ խցանումները, հեղեղումներն ու համակարգի վնասվածքները կանխարգելելու համար:

***Ալկալիացման, աղակալման և էրոզիայի կանխարգելում***

Ջրանցքների սպասարկման տարածքում հնարավոր է էրոզիոն և ճահճացման ռիսկերի առաջացում, որոնք կարող են հանգեցնել հողերի աղակալմանը և ալկալիացմանը: Համակարգի ենթակայության տակ գտնվող հողատեսքերում էրոզիոն երևույթները կանխելու նպատակով անհրաժեշտ է մշակովի ոռոգվող հողատարածքներում հողը մշակելիս իրականացնել հակաէրոզիոն միջոցառումներ: Լանջերի հորիզոններով առաջարկվում է կիրառել մշակաբույսերի խիտ ցանք, ակոսավորում և թմբավորում, իսկ ոռոգումը կատարել սահմանված նորմերով՝ կարճ ակոսներով:

Տարածքներին բնորոշվում չեն գրունտային ջրերի բարձր մակարդակը: Քանի որ այդ տարածքները հակված չեն ճահճացման, պետք է փաստել, որ ավելորդ ջրերը հողամասերից ժամանակին կարող են հեռացվել:

***Ոռոգման ջրի որակի պահպանում***

Ջրանցքների միջոցով մատակարարվող ջրի որակը կախված է ջրաղբյուրից: Ջրի որակի մոնիտորինգը պարբերաբար իրականացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի կենտրոնի (ՇՄՀՄԿ) կողմից ընտրված նմուշարկման կետերում:

Ջրի որակի մոնիտորինգի տվյալները տեղադրվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (http://www.mnp.am) և ՇՄՀՄԿ-ի կայքերում (http://www.armmonitoring.am) և հասանելի են շահագրգիռ կողմերի համար: Տեղեկատվությունը թարմացվում է ամեն ամիս: ՋՕԸ-ն պետք է հետևի կայքերում տրամադրված տեղեկատվությանը և տեղեկացնի համայնքի ղեկավարներին ջրի որակի փոփոխությունների մասին:

Ոռոգման ջրի որակի շոշափելի վատթարացման դեպքում ՋՕԸ-ն պետք է դիմի Շրջակա միջավայրի նախարարությանը և/կամ տեղական ղեկավար մարմիններին՝ աղտոտման աղբյուրները բացահայտելու և հողերի վերականգնման համապատասխան միջոցառումներ նախաձեռնելու համար:

Շահառու համայնքի ոռոգման ջրի մատակարարման համար պատասխանատուները պետք է ապահովեն համայնքների ներսում բոլոր ջրօգտագործողների միջև՝ հաշվի առնելով ոռոգվող մշակաբույսերի ջրապահանջը:

## 7. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նախագծման փուլում նախագծման խորհրդատուն ծրագրի ազդակիր համայնքներում ուսումնասիրություններ և քննարկումներ է անցկացրել հիմնական ելակետային տվյալներ ձեռք բերելու, ինչպես նաև ծրագրի սոցիալական ազդեցությունը գնահատելու նպատակով: Խորհրդատուն նաև իրականացրել է հանրային քննարկումներ ազդակիր համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Այդ խորհրդատվությունների նպատակն է իրազեկել ազդակիր համայնքին/բնակավայրին նախագծի վերաբերյալ, ներկայացնել նախագծային լուծումները և նախագծին առնչվող հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցություններն ու դրանց մեղմացնող միջոցառումներն, ինչպես նաև տեղեկություն տրամադրելու արդյունքում իմանալ համայնքների մտահոգությունները և կարծիքները՝ նախագծման փաստաթղթերը ավարտին հասցնելու ժամանակ դրանք հաշվի առնելու նպատակով:

<<ՇՄԱԳ և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջների համաձայն, սույն նախատեսվող գործունեությունը ենթակա է նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և այդ համատեքստում ևս նախատեսվում են հանրային քննարկումներ:

1-ին հանրային քննարկումները կազմակերպվել են 2023թ-ի մայիսի 4-ին Դիլիջանի Թեղուտ բնակավայրում, որի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթում 2023թ-ի ապրիլի 22-ի համարում: Հանրային քննարկումների հայտարարությունը, մասնակիցների ցանկը և արձանագրությունը, ինչպես նաև Դիլիջանի համայնքի ղեկավարի կողմից տրված նախնական համաձայնության գրությունը ներառաված են սույն ՆԳՀ-ի Հավելված 6-ում:

## 8. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցությունը մոտակա բնակչության վրա բացասական ազդեցությունները իչնպես նշվել է հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ և կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ)՝ նախատեսված սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում բնապահպանության մասնագետի կողմից կիրականացվեն մոնիթորինգի ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիթորինգի ստուգաթերթիկում:

Տեխնիկական վերահսկողը պետք է իրականացնի ամենօրյա հսկողություն, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողը պարտավոր է ժամանակին տեղեկացնելու կապալառուին նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է հավելված 1-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է հիմնական կապալառուի հետ մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. հունիսի 21:
- ԱՋԲ 2015, Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- Շինարարական Կլիմայաբանութուն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- http://xn--80aajzhcnfck0a.xn--p1ai/PublicDocuments/1310049.pdf
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- www.arlis.am

  www.atdf.am

ՀՀ կառավարության N 862-Ա որոշում: Անհատույց սեփականության իրավունքով գույք հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ կազմակերպելու մասին: 25 օգոստոս 2016, URL: https://www.e-gov.am/gov-decrees/item/27593/:

Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներ, Մոսկվա, Հիդրոմետհրատ – 1983:

ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:

ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### Հավելված 1. Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան. մեղմացնող միջոցառումներ

| Հնարավոր բացասական ազդեցություն | ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | Պատասխանա-տու կազմակերպու-թյուն | Մեղմացնող միջոցառումների ժամանակը | Վերահսկող կազմակեր-պություն | Մեղմացնող միջոցառումնե ի ծախսերը |
|---|---|---|---|---|---|
| | ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ | | | | |
| Հողի բերրի շերտի վնասում | - Շին.մեքենաների ոչ կարգավորված տեղաշարժի բացառում՝ կից տարածքների հողային ծածկույթի վմակերեսի վրայով: Թույլ տալ դրանց տեղաշարժումը միայն գոյություն ունեցող կամ նշանակված ժամանակավոր ճանապարհներով.<br>- Աշխատանքների ավարտից հետո՝ տարածքի մաքրում, մակերեսի վերականգնում | Կապալառու | Աշխատանքները սկսելուն պես և հողային աշխա-տանքների ընթացքում | Տեխնիկական վերահսկողը | Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում |
| Ազդեցություն կենսաբազմազանության վրա | - Նվազեցնել ազդեցությունը բույսերի վրա՝ հողային աշխատանքների հիմնական մասը պլանավորելով և իրականացնելով վեգետացիոն ոչ ակտիվ ժամանակաշրջանում.<br>- Սահմանափակել բնական միջավայրերի խախտումը՝ շինարարական գործողությունների համար հատկացնելով նեղ միջանցք | Կապալառու | Աշխատանքները սկսելուն պես և հողային աշխա-տանքների ընթացքում | Տեխնիկական վերահսկողը մասնաճյուղ | Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ջրատարերի ուղեգծով: Արգելել տրանսպորտային միջոցների / սարքավորումների | | | | |
| Հնարավոր բացասական ազդեցություն | ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | Պատասխանա-տու կազմակերպու-թյուն | Մեղմացնող միջոցառումների ժամանակը | Վերահսկող կազմակեր-պություն | Մեղմացնող միջոցառումնե ր ի ծախսերը |
| | տեղաշարժը և շին.նյութերի/թափոնների անփութորեն տեղադրումը չափից մեծ տարածքում ծրագրի գոտու շուրջ<br>- Խստորեն վերահսկել պատահական հանդիպող բուսականության մաքրումը խողովակաշարի ուղեգծի երկայնքով՝ սահմանված միջանցքից դուրս ազդեցությունները կանխելու համար,<br>Տարածքում հայտնաբերված ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի առանձնյակների տեղափոխումն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի թիվ 781-Ն որոշման պահանջներով Տարածքում հայտնաբերված ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի առանձնյակների | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | տեղափոխումն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի թիվ 781-Ն որոշման պահանջներով<br>- առանձնացնում են օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.<br>- ժամանակավորապես սահմանափակում են առանձնացված պահպանվող գոտիներում<br>- նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:<br>Հողերում հայտնաբերված՝ կարմիր գրքում գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների առանձնյակների տեղափոխումն իրականացվում է տնտեսական գործունեություն իրականացնողների միջոցների հաշվին՝ լիազորված պետական մարմնի հետ կնքված համապատասխան պայմանագրի համաձայն:<br>Կենդանական աշխարհի վրա ազդեցությունը մեղմացնելու նպատակով բացառել ՝<br>1. գիշերային ժամերին մեքենամեխանիզմների լուսավորությամբ կամ այլ լուսավորության կիրառմամբ աշխատանքները<br>2. տրանսպորտային շարժն ԱՊ-ում՝ հատկապես Պարկի պահպանության օբյեկտ հանդիսացող կարևոր կենդանատեսակների բազմացման շրջանում | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 3. Շինարարական աշխատանքները ԱՊ-ի պահպանման գոտու այն տեղամասերում, որոնք հանդիսանում են կարևոր կենդանատեսակների բնադրավայրեր կամ միգրացիոն ուղիներ | | | | |
| Խողովակաշարի ուղեգծի երկայնքով վայրի աճած բուսականության և թփերի հեռացում | - Վարել վայրի աճածած հեռացվող թփերի ճշգրիտ գրանցումներ. համաձայնեցնելով այն շինարարության վերահսկողի հետ.<br>- Շինարարական աշխատանքներն իրականացնելիս շինարարը կառաջնորդվի այնպիսի սկզբունքներով, որ բացառվի ԴԱՊ-ի տարածքում որևէ ծառաթփուտային բուսականության հատումը և հնարավոր բացասական ազդեցությունների առաջացումը: | Կապալառու | Թփերի մաքրումից առաջ, ընթացքում և հետո | Տեխնիկական վերահսկողը | Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում. |

| Հնարավոր բացասական ազդեցություն | ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | Պատասխանա-տու կազմակերպու-թյուն | Մեղմացնող միջոցառումների ժամանակը | Վերահսկող կազմակեր-պություն | Մեղմացնող միջոցառումների ծախսերը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| Շինարարական ճամբարների շահագործում | - Շինարարական ճամբարների համար ընտրել բուսածածկից ազատ տարածքներ.<br>- Շինարարական հրապարակները տեղակայել բացառապես համայնքային հողերի վրա, որոնց համար նախկինում թույլտվություններ են ձեռք բերվել<br>- Շինարարական ճամբարներն ապահովել ջրամատակարարմամբ և ջրահեռացմամբ և միշտ պահել այդ համակարգերը բարվոք տեխնիկական վիճակում.<br>- Ապահովել շինարարական ճամբարները աղբամաններով և մշտական աղբահանությունը<br>- Շինարարական աշխատողներին արգելել թափոնների բաց այրումը: | Կապալառու | Շինաշխատանք-ներից առաջ | Տեխնիկական վերահսկողը | Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Շինարարության ընթացքում թափոնների առաջացում և կառավարում | - շինհրապարակում առաջացող թափոնները ժամանակավոր կուտակել<br>բնապահպանական տեսանկյունից առավել ընդունելի վայրեր և հեռացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով<br>- կենցաղային թափոնների և շինարարական աղբի տեղադրում համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված | Կապալառու, Տեղական մարմիններ | Շին.աշխատանք-ների ընթացքում, հեռացնել կուտակումից հետո 3-5 օրվա ընթացքում | Տեխնիկական վերահսկողը | Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում. |

| Հնարավոր բացասական ազդեցություն | ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | Պատասխանա-տու կազմակերպու-թյուն | Մեղմացնող միջոցառումների ժամանակը | Վերահսկող կազմակեր-պություն | Մեղմացնող միջոցառումնե ր ի ծախսերը |
|---|---|---|---|---|---|
| | - վտանգավոր նյութերի հեռացում համաձայնագրերի պայմաններին՝ համապատասխան մարմինների հետ համաձայնեցված<br>- Արգելել ցանկացած տեսակի թափոնների բացոթյա այրումը<br>- Նախատեսել որքանով հնարավոր է թափոնների վերամշակումը և կրկնակի օգտագործումը և խուսափել արտադրությունից<br>- շինանյութերը (իներտ նյութեր, բետոն) ձեռք բերել լիցենզավորված մատակարարներից | | | | |
| Վառելիքաքսուկային կամ այլ նյութերի արտահոսք | -Արտահոսքերի վերահսկման միջոցառումների իրականացում,<br>- վտանգավոր նյութերի ինչպիսիք են՝ նավթը, քսայուղերը, տարբեր տեսակի վառելանյութերը, պատշաճ պահեստավորում հատուկ մշակված սահմանագծում, | Կապալառու | Շինարարական աշխատանքների ընթացքում | Տեխնիկական վերահսկողը | Շինարարակա ն աշխատանքնե ր ի ընթացիկ ծախսեր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | -տեխնիկական միջոցների վառելանյութով լիցքավորում լցավորման կայաններում՝ խուսափելու համար արտահոսքերից | | | | |
| Օդի աղտոտվածու-թյուն՝ մեքենաների արտանետումներից և շինարարական փոշուց | - Պահել մեքենաները և սարքավորումները համապատասխան տեխնիկական վիճակում՝ ավելորդ արտանետումներից խուսափելու համար<br>- Խուսափել շարժիչների անգործությունից | Կապալառու | Շին.աշխատանք-ների ժամանակ ըստ | Տեխնիկական վերահսկողը | Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում. |

| Հնարավոր բացասական ազդեցություն | ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | Պատասխանա-տու կազմակերպու-թյուն | Մեղմացնող միջոցառումների ժամանակը | Վերահսկող կազմակեր-պություն | Մեղմացնող միջոցառումնե ր ի ծախսերը |
|---|---|---|---|---|---|
| | - Միշտ ծածկել շինարարական նյութերով և աղբով բեռնված բեռնատարները.<br>- Ջրցանել շին.հրապարակը չոր եղանակին և փոշու մեծ ծավալ առաջացնող աշխատանքների իրականացման ժամանակ: | | անհրաժեշտության և կիրառելիության | Տեխնիկական վերահսկողը | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Շինարարության հետ կապված ժամանակավոր ազդեցություններ<br>1. երթևեկության աճ<br>2. մուտքի արգելափակում<br>3. աղմուկ և փոշի | 1. համայնքին կառաջարկվի շինարարական տեղամասը շրջանցող ճանապարհ<br>2.շինարարական ճամբարները, շինարարական տեխնիկան կտեղադրի բնակավայրից հեռու, հանրային կառույցների, մասնավոր գույքի և/կամ հողերի մուտքը չարգելափակելու համար<br>3. Շինարարության և սարքավորումների աշխատանքի հետևանքով առաջացող փոշու և աղմուկի ազդեցությունը մեղմելու նպատակով հարկավոր է.<br>• շինարարական ճամբարները կկազմակերպվեն բնակելի տարածքներից հեռու,<br>• աղմկոտ աշխատանքները կիրականացվեն ցերեկվա ժամերին, | Կապալառու | Շին. աշխատանքների մեկնարկին զուգընթաց և աշխատանքների ընթացքում | Տեխնիկական վերահսկողը | Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում |

| Հնարավոր բացասական ազդեցություն | ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | Պատասխանա-տու կազմակերպու-թյուն | Մեղմացնող միջոցառումների ժամանակը | Վերահսկող կազմակեր-պություն | Մեղմացնող միջոցառումնե րի ծախսերը |
|---|---|---|---|---|---|
| 4. առողջական խնդիրներ<br><br>5. պատահարներ շինարարական հրապարակում | • հնարավորինս կնվազեցվի ծանր տեխնիկայի օգտագործումը բնակավայրերի մոտակայքում,<br>• մեքենաների վրա կտեղադրվեն ձայնախլացուցիչներ,<br>• բնակավայրերում աշխատանքներ իրականացնելիս, կկիրառվեն փոշու կառավարման տեխնոլոգիաներ:<br>4. Աշխատողների շրջանում ալերգիկ, շնչառական և այլ առողջական խնդիրներ չառաջացնելու նպատակով, կկիրառվեն հակա-ալերգիկ, միջազգային չափորոշիչներին համապատասխանող շինանյութեր,<br>5.Աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու կամ դրանցից խուսափելու համար, կկիրառվեն հետևյալ մեղմացնող միջոցառումները.<br>• բարձրացնել իրազեկվածությունը | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | շինարարական աշխատանքների ժամանակ բացասական ազդեցությունների վերաբերյալ,<br>• ապահովել, որ բանվորները և տեղանքի ցանկացած այցելու ապահոված լինի և օգտագործի անձնական պաշտպանիչ արտահագուստ,<br>• ապահովել, որ բանվորները տեղամասի անվտանգության վերապատրաստում ստանան | | | | |

| Հնարավոր բացասական ազդեցություն | ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | Պատասխանա-տու կազմակերպու-թյուն | Մեղմացնող միջոցառումների ժամանակը | Վերահսկող կազմակեր-պություն | Մեղմացնող միջոցառումնե ի ծախսերը |
|---|---|---|---|---|---|
| | • ապահովել, որ խոշոր սարքավորումներ աշխատեցնողները պատշաճ կերպով վերապատրաստված և լիցենզավորված լինեն,<br>• ապահովել , որ շինարարական սարքավորումները ստուգված և լիցենզավորված լինեն,<br>• ապահովել, որ շինարարական տեխնիկան օգտագործվի խստորեն հետևելով շահագործման հրահանգներին,<br>• ունենալ առաջին օգնության բժշկական փաթեթներ և հակահրդեհային սարքավորումներ,<br>• աշխատանքային ժամերից դուրս արգելել գործունեությունը տեղանքում,<br>• ապահովել, որ ակտիվ աշխատանքային տարածքները լինեն ցանկապատված, այնպես որ երեխաները, մարդիկ չկարողանան մուտք գործել և վնասվել: | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Համայնքային, ազգային պարկի, վարձակալած, մասնավոր հողերի ժամանակավոր օգտագործում | Շինարարության ընթացքում հողը կօգտագործվի սեփականատիրոջից, վարձակալից նախապես ձեռքբերված համաձայնությունների շրջանակներում: | Կապալառու, պատվիրատու | Շինաշխատանքների մեկնարկից առաջ | Տեխնիկական վերահսկողը | Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում |

| Հնարավոր բացասական ազդեցություն | ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | Պատասխանա-տու կազմակերպու-թյուն | Մեղմացնող միջոցառումների ժամանակը | Վերահսկող կազմակեր-պություն | Մեղմացնող միջոցառումների ծախսերը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Ընթացիկ ծախսեր |
| Վնասված գույքի փոխհատուցում | Խողովակաշարի ապամոնտաժման աշխատանքների հետևանքով վնասված ակտիվները պետք է վերականգնվեն կամ փոխհատուցվեն: | Պատվիրատու | Շինարարության մեկնարկից առաջ և ընթացքում | Տեխնիկական վերահսկողը | Ընթացիկ ծախսեր |
| Հողօգտագործում շինարարական ճամբարների ստեղծման նպատակով | Շինարարության կապալառուն ձեռք կբերի համայնքի հանձնայնությունը համայնքային չօգտագործվող հողի վրա շինարարական հրապարակ հիմնելու համար կամ կստորագրի հողի վարձակալության պայմանագիր: | Կապալառու | Շինարարության մեկնարկից առաջ | Տեխնիկական վերահսկողը | Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում |

## Հավելված 2. Մշտադիտարկման պլան

Սույն մշտադիտարկման պլանը կօգտագործվի Բնապահպանական կառավարման պլանի (Հավելված Ա) իրականացման համապատասխանությունը որոշելու նպատակով

| Մեղմացնող միջոցառումներ | Մոնիտորինգի ցուցանիշներ | Մոնիտորինգի ժամանակը/ հաճախականությունը | Մոնիտորինգի մեթոդները | Վերահսկող կազմակերպություն |
|---|---|---|---|---|
| Շինարարության փուլ | | | | |
| Խրամուղիներից հանված գրունտը դարսվում է համեմատաբար հարթ և բուսականությունից ազատ տարածքներում և օգտագործվում է խողովակների ապամոնտաժումից հետո հետլիցքի համար | Հողային աշխատանքների տարածքների տեսողական հայտնաբերում | Հողային աշխատանքների ժամանակ | Տեսողական ստուգում | Տեխնիկական վերահսկողը |
| Հարակից տարածքի կենսաբազմազանության մշտադիտարկում | Կառավարման պլանով սահմանված բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցության մեղմացնող միջոցառումները | Շինարարության ընթացքում | Տեսողական ստուգում | Տեխնիկական վերահսկողը Կենսաբազմազանության մասնագետ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Շին.մեքենաները շարժվում են տեղական գոյություն ունեցող ճանապարհներով կամ ժամանակավոր մոտեցնող ճանապարհներով, չանցնելով անկանոն կերպով հողային մակերեսների վրայով | Շինարարության տարածքում և դրա շուրջը հողային մակերեսների տեսողական հայտնաբերում | Շինարարության ընթացքում | Տեսողական ստուգում | Տեխնիկական վերահսկողը |

Շինհրապարակի մշտադիտարկումը կազմակերպվում է համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ավելցուկային գրունտը օգտագործվում է գոյություն ունեցող գրունտային ճանապարհի հարթեցման համար և/կամ տեղափոխվում է այլ տարածք, որը համաձայնեցված է տեղական ղեկավարության հետ | Գրունտի թափոնատեղերի տեսողական հայտնաբերում, Համաձայնեցման փաստաթղթեր | Հողային աշխատանքների ժամանակ և դրանց ավարտից հետո | Տեսողական ստուգում | Տեխնիկական վերահսկողը |
| Շինարարական նյութերի և թափոնների կառավարում տեղում | Շին.նյութերը և աղբը պահվում են աշխատանքային տարածքի ներսում հատուկ նշված վայրերում, Շին.աղբի ավելորդ քանակ չի կուտակվում տեղում | Շինարարական աշխատանքների ընթացքում | Տեսողական ստուգում | Տեխնիկական վերահսկողը |
| Վառելիքաքսուկային և այլ վտանգավոր նյութերը պահեստավորվում են հստակ սահմանագծում | Շինարարության տարածքում և դրա շուրջը հողային մակերեսների տեսողական հայտնաբերում, հանձնման փաստաթղթեր | Շինարարական աշխատանքների ընթացքում, ամիսը մեկ անգամ | Տեսողական ստուգում | Տեխնիկական վերահսկողը |
| Շին.նյութերի և թափոնների տեղափոխման համար օգտագործվում են ծածկվող բեռնատարներ | Բեռնատարների պայմանները | Ամբողջ շինարարության ընթացքում | Տեսողական ստուգում տրանսպորտի ուղեգծի երկայնքով | Տեխնիկական վերահսկողը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Շին.հրապարակների փոշենստեցում՝ ջրցանման միջոցով | Շին.հրապարակների պայմանները | Չոր եղանակին շինարարություն իրականացնելիս | Տեսողական ստուգում | Տեխնիկական վերահսկողը |
| Տրանսպորտային միջոցները համապատասխան տեխնիկական վիճակում ենև ունեն աղմկախլացուցիչներ | Տրանսպորտային միջոցների տեխնիկական պայմաններ | Օրական | Աղմուկի մակարդակի չափիչներ | Տեխնիկական վերահսկողը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Շինարարության նպատակով ժամանակավոր օգտագործման հողատարածքների համար սերվիտուտի համաձայնագրերի ստորագրում համայնքների / տեղական ղեկավարման մարմինների հետ | Սերվիտուտի կամ հողօգտագործման համաձայնագրերի առկայություն | Մինչ Կապալառուի մոբիլիզացումը շին.հրապարակ | Փաստաթղթերի ստուգում | Տեխնիկական վերահսկողը |
| Աշխատողների առողջության և անվտանգության ստանդարտների կատարում | Աշխատողներն ապահովված են և օգտագործում են անձնական անվտանգության հարմարանքներ, Բարդ մեխանիզմների վրա աշխատող անձնակազմը անցել է համապատասխան վերապատրաստում, Աշխատատեղերը ապահովված են առաջին օգնության համար անհրաժեշտ բժշկական պարագաներով և հակահրդեհային սարքավորումներով, Աշխատանքի հետ կապված լուրջ պատահարներ | Շինարարության ընթացքում | Տեսողական ստուգում, Անձնակազմի վերապատրաստման փաստաթղթերի և մեքենաների շահագործման համար լիցենզիաների ստուգում | Տեխնիկական վերահսկողը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տեղի չեն ունեցել: | | | |
| Շին.հրապարակների վերականգնում՝ հեռացնելով թափոնները, կատարելով հողի վերին շերտի հետլիցք և հարթեցում | Շինարարության միջանցքի նախնական տեսքի վերականգնում, Շին.նյութերի և թափոնների մնացորդների և աղբի բացակայությունը | Շինարարության ընթացքում և գործունեության վերջին փուլում | Տեսողական ստուգում | Տեխնիկական վերահսկողը |

Հավելված 3

Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ

(մարզ, համայնք)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N ԱՀ-12 «30» նոյեմբեր 2022թ.

Օբյեկտ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՂՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

/միջինից բարձր ռիսկայնության աստիճան՝ III կատեգորիա/

(հանձիրձ բնորոշումը, հզորությունը

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ նախագծային փաստաթղթերի մշակման համար:

ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԹԵՂՈՒՏ ԳՅՈՒՂ

(մարզի, հասարակի, տողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը համայնքի զարգացման ծրագիր

(կառուցապատման նպաստակով 22 օրենքդրությամբ սահմանված կարգով հաստատված հողամասերի ադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող ամիրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը Նախագիծը ներկայացնել համաձայնեցման Դիլիջանի համայնքապետարան մինչև 2023 թվականի նոյեմբերի 30-ը:

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է համայնքային նշանակության ճանապարհներ են, Ազգային պարկի տարածք

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը --------

(հողամասը սահմանները, նորորդի ատային նշանարմամբ, մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը ասֆալտապատ և գրունտային ճանապարհներ, բնական լանդշաֆտ

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները ----------

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

ճանապարհների հատվածում առկա են ստորգետնյա կոմունիկացիաներ

6. (*) Կից հողամասեր համայնքային, պետական և մասնավոր հողեր

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) մասամբ ազգային պարկի հողեր

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ չկան

(տեղամասում գտնվող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, իժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտներ՝ նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500*

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ *Նախագիծն իրականացնել ՀՀ քաղաքաշինության գործող նորմատիվ պահանջներին համապատասխան:*

*Ծրագրով նախատեսվում է Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղում ջրագծի կառուցում, մասնավորապես*

- *արտաքին ցանցի կառուցում /մոտ 6կմ/,*
- *ներքին ցանցի կառուցում /մոտ 2կմ/,*
- *գլխամասային ջրընդունիչի կառուցում /1 հատ/,*
- *կապտաժների կառուցում /1 հատ/,*
- *ջրամբարի ցանկապատում,*
- *ջրաչափական դիտահորերի կառուցում:*

(Ելնելով ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, ասկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) *չի փոփոխվում*

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) *չի փոփոխվում*

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) ------

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) *չի փոփոխվում*

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%) *չի փոփոխվում*

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%) ------

9.7. այլ պահանջներ ----------

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը ----------

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները ----------

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

*(Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ)*

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում *կցվում է*
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում *կցվում է*
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում *կցվում է*
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը *կցվում է*
(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլեկտրոնային տվյալների

12.5. թույլ հոսանքներ ----------

12.6. աղբահանություն ----------

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում ----------
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում *հնարավորինս պահպանել բնական լանդշաֆտը*
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր ----------
(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ *առաջնորդվել օրենքով սահմանված նորմատիվ-տեխնիկական պահանջներով*

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ *ապահովել ՀՀՇՆ 21.01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն նորմերի պահանջները*

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ ----------

19. Շրջակա միջավայրի պահպանում *օրենքով սահմանված կարգով*

(շրջակա միջավայրը վնասակար ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում *Նախագծով նախատեսել շինարարական աշխատանքների ընթացքում երթևեկության անվտանգությունը ապահովող միջոցառումներ: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրը զերծ պահել շինաղբի կուտակումից:*

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը *մինչև 2023 թվականի նոյեմբերի 30-ը, Աշխատանքային նախագիծ*

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ *ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ սահմանված կարգով*

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում *ջրագծի անցկացման ուրվագիծը առաջարկվող հետագծի նշումով, համաձայնեցնել ինժեներական ենթակառուցվածքների համակարգերը տնօրինող կամ շահագործող կազմակերպությունների հետ*

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ նստիգային նախագծի նախնական համաձայնեցում. նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ ----------

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում *Ջրագծի արտաքին ցանցը մասամբ անցնում է ազգային պարկի տարածքով: Առկա է <<Դիլիջան>> ազգային պարկ ՊՈԱԿ-ի համաձայնությունը:*

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ. ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանողական պահարանների տեղադրում ----------

27. Այլ պայմաններ *Շինարարության ավարտի ժամկետը կնախատեսվի շին.թույլտվությամբ:*

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Դ.ՍԱՐԳՍՅԱՆ*

(անունը, ազգանունը)

Մ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստան, ՏԱՎՈՒՇ, ԴԻԼԻՋԱՆ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ Փ., Շ 55, Հեռ. (0268)22585, dilijan1@yahoo.com, dilijar.tavush@mta.gov.am

N **1318**
28 նոյեմբեր 2022 թ.

«Շին մաստեր» ՍՊԸ-ի տնօրեն Ռաֆայել Բաղալյանին

Դիլիջան համայնքի և «Շին մաստեր» ՍՊԸ-ի միջև կնքված «ՀՀ-ՏՄԴ-ԳՀԽԾՁԲ-22/24 » ծածկագրով պայմանագրի Թեղուտ գյուղի ջրատարի կառուցման ծրագրի ջանակներում ներկայացնում ենք Թեղուտ գյուղին վերաբերվող տվյալներ.

1. Տնտեսություններ 330

Բնակչության թիվը 1585

2. Գյուղատնտեսական կենդանիներ

Խոշոր եղջերավոր կենդանիներ----------540

Խոզեր --------561

Ոչխարներ----------113

Ձիեր ----------38

Թռչուններ----------1863

Մեղվաընտանիքներ----------128

Ավանակներ----------6

---

Ցանքատարածություններ---------55 հա

Այգի----------2.0հա

Աղբավայրի հեռավորությունը – 7.5 կմ

Հյուրանոցներ -4 հատ

Հյուրատներ- 32 հատ

Ջրատարը համարվում է համայնքի սեփականությունը

Թեղուտ գյուղի վարչական ղեկավար Հ.Թամրազյան



Հավելված 5

№ 20-720

«9» «11» 2022թ.

Տավուշի մարզի

Դիլիջան համայնքի

ղեկավարի ժ/պ Ա. Բազինյանին

Հարգելի պարոն Բազինյան

Ի պատասխան Ձեր 2022 թվականի նոյեմբերի 7-ի № 2126-22 գրության՝ հայտնում եմ, որ 2023 թվականի տուրիզմի ոլորտում նախատեսված Աղավնավանք և Թեղուտ բնակավայրերի խմելու ջրագծերի վերանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների իրականացման վերաբերյալ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից առարկություններ չկան: Միաժամանակ առաջարկում եմ ներկայացնել վերոգրյալ նախագծանախահաշվային աշխատանքների վերջնարդյունքը:

Հարգանքով՝

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի

տնօրենի պարտակատարություններ կատարող Ա. Ղազարյան

Դիլիջանի քաղաքապետարանի գրասենյակի բաժնի պետ Գ.Ալիխանյան
(0268) 2-70-32, 2-71-71

Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ <<ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցման>> նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում>> նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյա հանրային քննարկումների

**Արձանագրություն թիվ 1**

04.05.2023թ. Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայր

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2023 թվականի մայիսի 4-ին ժամը 12:30-ին** Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցման» նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյա հանրային քննարկումներ:

Հանրային քննարկմանը մասնակցում էին Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի պաշտոնակատար Վ. Գրիգորյանը, «Կայուն զարգացման ներդրումային հիմնադրամ»-ի ներկայացուցիչ Վ. Դավթյանը, «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և համայնքապետարանի ներկայացուցիչներ, Թեղուտ բնակավայրի բնակիչներ:

**Քննարկման վարող և պատասխանատու Վ. Գրիգորյանը** մասնակիցներին ներկայացրեց հանդիպման նպատակը, այն է՝ նախատեսվող գործունեության համար «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով հանրային քննարկումների անցկացումը, այնուհետև խոսքը փոխանցեց «Կայուն զարգացման ներդրումային հիմնադրամ»-ի ներկայացուցիչ Վ. Դավթյանին:

**Վ. Դավթյանը** նշեց, որ ծրագրի նպատակն է ապահովել ոռոգման ջրամատակարարման կայուն և արդյունավետ օգտագործում՝ խթանելով գյուղատնտեսական արտադրության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև նվազեցնել թիրախային խմբի խոցելիությունը կլիմայական փոփոխությունների ազդեցության հանդեպ: Ծրագրի իրականացումը դրական ազդեցություն կունենա տարածաշրջանի ջրային ռեսուրսների կայուն և բնապահպանական տեսանկյունից կառավարման արդյունավետության վրա, կխթանի գյուղական շրջանների զարգացումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Ծրագրով նախատեսված աշխատանքների նպատակն է Թեղուտ բնակավայրում գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգի կառուցվածքների արդիականացումն ու ՀՀ-ում գործող նորմերի պահանջներին համապատասխան խմելու ջրամատակարարման ապահովումը:

Աշխատանքային նախագծի շրջանակներում մշակվել է.

- արտաքին ցանցի կառուցում /6 կմ երկարությամբ/,
- ներքին ցանցի կառուցում /2 կմ երկարությամբ/,
- գլխամասային ջրընդունիչի կառուցում,

- կապտաժի կառուցում՝ մեկ հատ,
- ջրամբարի ցանկապատում,
- ջրաչափական դիտահորի կառուցում:

Գյուղի խմելու-տնտեսական կարիքների համար անհրաժեշտ է 6՝89լ/վրկ ջուր, սակայն քանի որ գյուղը չունի առանձին ոռոգման համակարգ, նախատեսվում է աղբյուրի ամբողջ ջուրը՝ շուրջ 40 լ/վ հասցնել գյուղ 55 հա ցանքատարածությունների և 2 հա այգիների ոռոգման համար:

**Վ. Դավթյանը** հավելեց, որ ծրագրի շրջանակներում կարևորվել է բնապահպանական բաղադրիչը, քանի որ աշխատանքներն իրականացվելու են նաև «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում: Նշված հանգամանքը հաշվի կառնվի նախնական գնահատման հայտում՝ ելնելով ՀՀ օրենսդրական պահանջներից, որն այս պահին մշակման փուլում է: «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում որոշ աշխատանքներ իրականացվելու են ձեռքով, հատկապես այն վայրերում, որտեղ կան կիրճեր:

Գործունեության իրականացման համար օգտագործվելու են համայնքային նշանակության հողերը, գոյություն ունեցող ասֆալտապատ և գրունտային ճանապարհները: Կառուցվող խողովակաշարերն անցկացվելու են գոյություն ունեցող ճանապարհի հարևանությամբ՝ նախկին խողովակաշարերի ծրագրով: Շինարարական աշխատանքների իրականացմանը խոչընդոտող ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները՝ **Վ. Գրիգորյանը** հայտնեց համայնքի դրական դիրքորոշումը՝ համոզված լինելով, որ ծրագրի իրականացումից հետո կարդիականացվի Թեղուտ բնակավայրի ջրամատակարարման համակարգը և բնակիչները կօգտվեն կայուն ջրամատակարարման համակարգից, ինչը խթան կհանդիսանա համայնքի կենսամակարդակի բարելավման համար:

**Քննարկումը վարող և պատասխանատու**
ՀՀ Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի
ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման
և հավաքագրման բաժնի պետի պաշտոնակատար
Վ. Գրիգորյան _____

**«Կայուն զարգացման ներդրումային հիմնադրամ»**

Վ. Դավթյան _____

**Արձանագրող**

Դիլիջանի համայնքապետարանի մամուլի քարտուղար՝
Ա. Թամրազյան _____

Հանրային քննարկումներին մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

**Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ առաջին հանրային քննարկման նիստի մասնակիցների ցանկ:**

*Մայիսի 4, 2023 թվական*

. Թեղուտ բնակավայրի վարչական շենք

| Անուն ազգանուն | Կազմակերպություն կամ բնակության վայր | Էլ. հասցե կամ կոնտակտային տվյալներ | Մտորագրություն |
|---|---|---|---|
| [illegible] | «[illegible]» [illegible] | 077768777 | |
| [illegible] | «[illegible]» [illegible] | 091-29-29-26 | |
| [illegible] | «[illegible]» [illegible] | 077517533 | |
| [illegible] | [illegible] | 077-72-32-11 | |
| [illegible] | [illegible] | 055479995 | |
| [illegible] | [illegible] | 077738131 | |
| [illegible] | [illegible] | 094772110 | |
| [illegible] | [illegible] | 099 44-43-11 | |
| [illegible] | [illegible] | 098308536 | |
| [illegible] | [illegible] | 077715685 | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ**
**ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստան, ՏԱՎՈՒՇ, ԴԻԼԻՋԱՆ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ Փ., Շ 55, Հեռ.
(0268)22585

*11 մայիսի, 2023թ.*

Սույն թվականի մայիսի 4-ին՝ ժամը 12:30-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցման» նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

Աշխատանքային նախագծի վերաբերյալ համայնքի նախնական կարծիքը գնահատվում է դրական:

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Մամուլի քարտուղար՝ Արփի Թամրազյան*
*(0268)22585*

[illegible]

«Երևանի [illegible] փոս ավազոցրման գնահատման և վերանախագծման մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ հոդվածների, [illegible] ՀՀ [illegible] 19.11.2014թ. «Հանրային ծանուցման և հնարավորների իրազեկման կարգ սահմանելու մասին» N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2023թ. մարտի 4-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ Արարատի մարզի Պղնգարի [illegible] /Պղնգարի, Արամիկյան 55 հասցեում՝ ուղի կամաձև Պղնգարի համայնքի Արամիկյանի գնահատելիում բարելավման կառուցման [illegible] Երևանի փոս ավազոցրման համակարգի գնահատման վերանախագծման 1-ին հանրային հանդիպում: Հնարավոր [illegible] է ծանոթանալ Պղնգարի [illegible] սայտում՝ հասցեներով՝ kilijan.tavush@mta.gov.am, [illegible] ավագանի գրասենյակ /Նարեկ, Արամիկյան 51 մասնաշենք: Հեռ.՝ +374 95-27-22-22.

Պղնգարի համայնքապետարան

[illegible]

«Երևանի միջազգային փոս ավազոցրման գնահատման և վերանախագծման մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ հոդվածների, [illegible] ՀՀ կառավարության 19.11.2014թ. «Հանրային ծանուցման և հնարավորների իրազեկման կարգ սահմանելու մասին» N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2023թ. մարտի 4-ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ Արարատի մարզի Պղնգարի համայնքի Ելեգնա գյուղական բնակավայրի կարգական [illegible], 1-ին փողոց թիվ 36/1 հասցեում՝ ուղի կամաձև Պղնգարի համայնքի Ելեգնա բնակավայրում գրանցի կառուցման աշխատանքների՝ Երևանի միջազգային փոս ավազոցրման գնահատման գնահատման վերանախագծման 1-ին հանրային [illegible] Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Պղնգարի համայնքապետարանի սայտում՝ հասցեներով՝ kilijan.tavush@mta.gov.am, կամ ավագանի գրասենյակ /Նարեկ, Արամիկյան 51 հասցե: Հեռ.՝ +374 95-27-22-22:

Պղնգարի համայնքապետարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2020-05-19

# «ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀՄԴ)

| | |
|---|---|
| Գրանցման համար | 222.160.1101453 |
| Հիմնադրման տարի | 2019 |
| Գրանցման ամսաթիվ | 2019-11-12 |
| Գործունեության ժամկետ | Անժամկետ |
| Կարգավիճակ | Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն: |
| Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) | 51888753 |
| Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) | 01297269 |
| Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովագրի ծածկագիր) | 161453 |
| Էլ. փոստ | aravardgesi@gmail.com |
| Կայք | - |

## Գտնվելու վայրը

| | |
|---|---|
| Հասցե | ԱԲԵԼՅԱՆ / 3/22 ԱՋԱՓՆՅԱԿ 0038 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ |
| Հեռախոս | 010-000000 |

## Գործադիր մարմնի ղեկավար

| | |
|---|---|
| Պաշտոն | Գլխավոր տնօրեն |
| Անուն Ազգանուն | ՀԱՅԿ ԲԱԴԱԼՅԱՆ ԳԱՌՆԻԿԻ |
| Անձնագրային տվյալներ | 007217615 2015-08-04 008 |
| Հասցե | ԻՍԱԿՈՎԻ Փ. / Շ / 50/5 / ԲՆ. 5 ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ 0027 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ |